

244

ՄԻՈՆ



Մ. ՅԱԿՈԲԵԱՆԵ ՎԱՆԻ ՃԱՅՈՑ ՅԵՐՈՒՍԱԼԷՄ

«سیون» مجله ارمنیة شهریه ، دینیة ، ادبیة ، ثقافیة ، اللغة والبیان .
"SION" an Armenian Monthly of Religion, Literature and Philology

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

- | | |
|---------------------------------------|----------|
| — Բեղուն եւ Արդիւնաւաս Քառամեակ . | |
| Ամեն. Տ. Եղիշե Ս. Պատրիարք Զօր | |
| Գանակալութեան Զորքով Տարեդարձին Առթիւ | ԽՄԲ. 241 |

ԿՐԾՆԱԿԱՆ

- | | | |
|---------------------|---------------------|-----|
| — «Բարի» երիտասարդը | ԳԼՈՐԳ Ս. ՃԻՆԻՎԻՋԵԱՆ | 245 |
|---------------------|---------------------|-----|

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

- | | | |
|----------------------------|-----------------|-----|
| — Երբոր երկիրս օրջեցայ ... | ՄԱՌԻ ԱԹՄԱՃԵԱՆ | 248 |
| — Խորհուրդ գիշերուան | ՀՄԱՅԵԱԿ ԳՐԱՆԵԱՆ | 249 |
| — Տարիներ վերջ | ԶԱԼԷՆ ԵԿԷՆԵԱՆ | 249 |
| — Կը նայիմ կեանքին | Գ. ՀԱՐՏԱՐ | 250 |

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

- | | | |
|------------------------------|------------------|-----|
| — Վարդան մանրանկարիչ | ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ | 251 |
| — ԺԼ. դարու երկու ձեռագիրներ | ԱԻՆՏԻՍ ՆԵՐՍԷՍԵԱՆ | 252 |

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

- | | | |
|--------------------------------|-----------------|-----|
| — Թուրք Կեղեասիանոսի առ Նեստօր | Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ | 256 |
|--------------------------------|-----------------|-----|

ԽՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ

- | | | |
|----------------------|------------|-----|
| — Կրօնք եւ գիտութիւն | Ն. ԵԱՂԼԵԱՆ | 258 |
|----------------------|------------|-----|

ՊԱՏՄԱԿԱՆ

- | | | |
|----------------------|-----------------|-----|
| — Ուխտանք տոմարացակր | Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ | 263 |
|----------------------|-----------------|-----|

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

- | | | |
|---------------------|-------|-----|
| — «Ներսէս Շնորհալի» | Ա. Գ. | 264 |
|---------------------|-------|-----|

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐ

- | | | |
|------------------------------|-----------------|-----|
| — Ս. Տիմօթէոսի Վանք ի Կարկառ | Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ | 269 |
|------------------------------|-----------------|-----|

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

- | | | |
|--------------------------|--|-----|
| — Եկեղեցականք - Բեմականք | | 271 |
| — Պատեօնականք | | 272 |

ՍԻՈՆ - ի Տարեկան Բաժնեգիրնն է,
բոլոր երկիրներու համար, Անգլ. Շիլին 20

Redaction of the Armenian Monthly SION
Armenian Patriarchate,
P. O. B. 4001

Old City - Jerusalem (Jordan)

— ≡ Ս Ի Ո Ն ≡ —

ԼՐ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1964

Սեպտեմբեր

Թիւ 9

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԲԵՂՈՒՆ ԵՒ ԱՐԴԻՒՆԱՇԱՏ ՔԱՌԱՄԵԱԿ

ԱՄԵՆ. Տ. ԵՂԻՇԷ Ս. ՊԱՏՐԻԱՐԲ ՀՕՐ
ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԹԻՒ

Ներկայ տարւոյ Օգոստոսի 21ին լրացաւ Ս. Աթոռոյս Պատրիարք Նորին Ամենապատուութիւն Տ. Եղիշէ Ս. Արքեպիսկոպոս Տէրաւերեանի Գահակալութեան չորրորդ տարին:

Նրուսաղէմի Ս. Յակոբեանց դարաւոր այս Վանքին հարուստ պատմութեան մէջ լուսաւոր հանգրուան մըն է վերջին չորս տարիներու կարճ շրջանը. հանգրուան մը, որ գեղեցկացած է խիզախ յղացումներու, անսակարկ ու անդուլ ջանքերու և հեռահայեաց ծրագրումի արդիւնքը հանդիսացող հրաշքի համադր իրագործումներով:

Պարոնտէրներով, Շղթայակիրներով, Գուրեաններով և Գուշակեաններով սրբացած Գահը բարձրանալով այնպիսի շրջանի մը՝ երբ ազգապարծան ու բարեհամբաւ այս Հաստատութիւնը չորս երկար և զժրախտ տարիներու արուեստակեալ ու անարդիւն պայքարներէ ետք դարձած էր ուժաւատ և նկուն, Ն. Ամենապատուութիւն Պատրիարք Ս. Հայրը իրեն համար մէկ կողմէ առաջնահերթ խնդիր նկատեց վերակազմումն ու բարեփոխումը վանական կ'անքին, և միւս կողմէ՝ աւագ պարտականութիւն սեպեց վերաշարունակումը խառնակութեանց պատճառաւ ընդհատուած շինարար գործունէութեան:

Ս. Յակոբեանց հնադարեան Վանքը անցած է փորձանաւոր, ճակատագրական և մտանդաւոր ժամանակներէ, և խրաքանչիւր անգամ ալ անոր օգնութեան է հասած աստուածային հրաշք մը ու գալն փրկած անշքացումէ և կորուստէ: Նորին Ամենապատուութիւնն ալ, ապաւինելով Ամենակարողն Աստուծոյ շնորհին, Ս. Յակոբեանց նուիրեալ Միաբանութեան անդամներուն զորութեան և Հայ ժողովուրդի եկեղեցասիրութեան և օժանդակութեան, հաւատքով ու անհափիւի եռանդով ձեռնարկեց վերաշինութեան և վերակազմաւորման անյետաձգելի աշխատանքներուն:

Իր Գահակալութեան առաջին իսկ օրերէն Ն. Ամենապատուութեան ղեմ բարձրացող ամենէն կարևոր խնդիրն էր Երուսաղէմի Սուրբ Յարութեան Տաճարի նորոգութիւնը, որուն անհրաժեշտութիւնը զգացուեց էր տակաւին տասնեակ տարիներ առաջ։ Յոյներու և Լատիններու հետ Սրբոց Յակոբեանց Պատրիարքութիւնը ըլլալով իրաւատէր և վայելելով հաւասար ու անբռնաբարելի իրաւունքներ համայն Քրիստոնեայ աշխարհի հաւատքի այդ կեդրոնին մէջ, պարտաւորութեան տակ կը գտնուէր հայթայթելու նորոգութեան ծախսերու ընդհանուր ջուլմարին իր բաժին ելոյլ մէկ — երրորդը, այսինքն 300,000 Յորդանանեան Տինար, մօտ մէկ միլիոն տոլար։ Պապեստինեան ընդհարումներէն ետք նիւթական նեղ կացութեան մասնուած ըլլալով, Ս. Աթոռին համար բացարձակ անկարելիութիւն մըն էր վերոյիշեալ զուամարը տրամադրել։ Սակայն Ն. Ամենապատուութիւնը, իրեն յատուկ կորովով և անյուսահատ աշխատանքով ձեռնարկեց համազդային հանգանակութեան՝ անհունապէս քաջալերելով Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Ա. Վեհափառի 30 Ապրիլ 1962ի սրբատառ Կոնդակէն, որով Ն. Ս. Օթութիւնը Հայաստանեայց Եկեղեցիի բոլոր գաւալները կը հրաւիրէր կարելիութեան սահմաններուն մէջ իրենց մասնակցութիւնը բերելու սրբազան այս գործին։

Նորին Սրբազնութեան անխոնջ ճիգերուն արդիւնք էր նաև Կիւլպէնկեան Հիմնարկութեան որոշումը՝ Սուրբ Յարութեան Տաճարի նորոգութեան Հայկական ծախսերուն մասնակցելու 100,000 Աթերլինի աննախընթաց նուիրաարութեամբ մը։

Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Ա. Վեհափառ Կաթողիկոսի պատմական այցելութիւնը Ս. Քաղաք՝ Հայ Երուսաղէմի տարեգրութեան մէջ յիշատակելի և բացառիկ եղելութիւն մըն է, զեղեցկացած և անմահութեան կնիքով զրոշմուած մանաւանդ եղբայրական ողջագուրմամբ Ս. Էջմիածնի և Մեծի Տանն Կիլիկիոյ Աթոռակալներուն։ Ս. Յակոբեանց զինուորեալ Միաբանութիւնը, Ամենապատիւ Պատրիարք Ս. Հօր զլիաւորութեամբ, կը հրճուի նախաձեռնողն ու պատրաստողը ըլլալուն հասկացողութեան և համերաշխութեան այն միջոցներին՝ ուր միայն կարելի եղաւ իրագործել զոյգ Վեհափառներու եղբայրակցութիւնը։

Նորին Ամենապատուութիւնը, իր երեսնամեայ բեղուն գործունէութեան ընթացքին, որպէս Լուսարարապետ Ս. Յակոբեանց Վանքին և Տեսուչ և ուսուցիչ Ժառանգաւորաց Վարժարանին և Ընծայարանին՝ սերտօրէն կապուած է այս դարաւոր Հաստատութեան հովանիին տակ աճող Հայ կրթական կեանքին։ Իր այս սերտ կապն ու հայեցի դաստիարակութեան հանդէպ ունեցած անստասան հաւատքն էր որ կարելի դարձուց իրագործել Ամմանի հայ հոծ գաղութը արդիական վարժարանով մը օժտելու յանդուգն ծրագիրը։ Հ. Բ. Բ. Միութեան և Կիւլպէնկեան Հիմնարկութեան ազնիւ նուիրատուութիւններով, և Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան բարոյական ու նիւթակա՛ն ալ օժանդակութեամբ, կարելի եղաւ 1962ի Սեպտեմբերի 23ին պաշտօնապէս բացուած հրաշակել Հ. Բ. Բ. Միութեան Վահրամ Իզգաշեան Նախակրթարանը և Գ. Կիւլպէնկեան Մանկապարտէզը։ Ու այս սքանչելի իրագործումը, միացած այն իրողութեան՝ որ Երջանկայիշատակ Դուբեան Ս. Պատրիարքի օրերէն սկսեալ

Ս. Յակոբեանց Վանքէն ներս անհուն զոհողութիւններով կը պահուին Ս. Թարգմանչաց Նախակրթարանն ու Երկրորդական Վարժարանը, ինչպէս նաև Ժառանգաւորաց Վարժարանը և Ընծայարանը, կու գայ անգամ մը ևս փաստել թէ այս Աթոռը ըլլալով հանդերձ Հայաստանեայց Եկեղեցւոյ Նուիրապետական Գահերուն ամենէն կարևորներէն մին, միաժամանակ է՝ նաև օճախ մը լուսաւորութեան և կրթութեան: Իսկ Ն. Ամենապատուութիւն Տ. Եղիշէ Ս. Արքեպիսկոպոսին ներկայութիւնը այդ Գահին վրայ կը հանդիսանայ այն ապահով երաշխիքը՝ թէ պիտի շարունակուին ու աւելի մեծ եռանդով հետապնդուին Ս. Յակոբեանց Աթոռի դարաւոր աւանդութիւնները:

Ճինարարութեան այս ընդհանուր շարժումին ուրիշ մէկ կենդանի վկայութիւնն է Կիւլպէնկեան Հիմնարկութեան օգնութեամբ Վանքի հողամասին վրայ բարձրացուած գաղթականներու քառայարկ և քսանչորս յարկաբաժիններէ բաղկացած շէնքը, պաշտօնապէս բացուած ներկայ տարւոյ Փետրուարի 27ին՝ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Վսեմափայլ Նախագահ Տօրթ. Ժողէ Ա. Փերաիկայի կողմէ:

Ու տակաւին, անցնող չորս տարիներու ընթացքին, Պատրիարք Ս. Հօր հրահանգով Վանքէն ներս վերանորոգուեցան Ս. Յակոբայ Եկեղեցիի Ս. Սարգիս մատուռը և գաւիթը, Պատրիարքարանի զանազան բաժինները, Միաբանութեան ճաշարանն ու խոհանոցը և Տօլարանի նոր բաժինը՝ ուր գետեղուեցաւ Կիւլպէնկեան Հիմնարկութեան կողմէ ընծայուած թանկարժէք տողաշար մեքենան: Նորոգուեցաւ Բեթղեհէմի Հայոց Վանքը, ուր և գտնուեցաւ դարաւոր այլ թաղուած յունա-հռոմէական եկեղեցիի մը սիւնաշարքը: Միաժամանակ, Ս. Իննգետան Վանքի արևմտեան պատին տակ, վանքապատական հողամասի մը վրայ շինուեցան տասնհինգ խանութներ:

Նիւթեղէն կառուցումներու սրանչելի այս թափին մէջ, Ն. Ամենապատուութեան մտահոգութեան առարկաներէն մին դարձաւ վերակազմակերպումը Ժառանգաւորաց Վարժարանին և Ընծայարանին՝ որուն կարգապահական ներքին կեանքն ու աւանդութիւնները հիմնովին խախտելին քառամեայ դժբախտ պայքարներու ընթացքին: Գահակալութեան սկզբնական շրջանէն իր զուգորանքին և հոգածութեան առարկան դարձնելով Ժառանգաւորաց Ճեմարանը, Պատրիարք Արքազան Հայրը շեշտած կ'ըլլար կարևորութիւնն ու բախտորոշ դերը ուսման այս կեդրոնին՝ ուր իր դաստիարակութիւնն ու կրօնական պատրաստութիւնը ստացած է Սփիւռքի զանազան կողմերը պաշտօնավարող առաջնորդներու և հոգևոր հովիւներու մեծագոյն մասը: Միայն վերջին քառամեակի ընթացքին, Նորին Ամենապատուութիւնը, երկու տարբեր առիթներով, Ընծայարանի ութ ստներու արեւոյտական առաքիճանի ձեռնադրութիւնն ու օծումը կատարած է:



Քրիստոնէական հաւատքի կեդրոն հանդիսացող Ս. Քաղաքին մէջ երուսողէմի Հայ Պատրիարքութիւնը կը վայելէ ոնթիւ ու լայն իրաւունքներ, արտօնութիւններ և առանձնաշնորհներ, որոնց պահպանման ի խնդիր Ս. Յակոբ-

եանց Միաբանութիւնը երկար դարեր շարունակ ենթարկուած է ամենէն ծանր զոհողութիւններու և պայմաններու :

Երկարատեւ և անխմտ պայքարներէ ետք՝ այս Հաստատութիւնը անհրաժեշտօրէն պէտք ունէր անդորր և խաղաղ կեանքի՝ Քրիստոսակոյն սրբաւորներուն մէջ իր դարաւոր առաքելութիւնը կարենալ շարունակելու համար : Այդ ապահով և շինարար շրջանը սկսաւ 1960ի Օգոստոսի 21ին, Գահակալութեամբ Ամենապատիւ Տ. Եղիշէ Ս. Արքեպիսկոպոս Տէրաէրեանի : Բախտորոշ այս թուականէն սկսեալ, Ս. Յակոբեանց Վանքը հզօր ազդեցութեան տակն է վերազարթնումի և շինարարութեան վարակող թափի մը՝ որ կը բլթի ն. Սրբազնութեան անապառ եռանդէն, անսահման հաւատքէն և Ս. Աթոռին հանդէպ անոր ունեցած անհուն սէրէն և նուիրումէն :

Այնչափաւ ու ներողամիտ բոլոր անոնց հանդէպ՝ սրոնք զժքախտ շրջան մը կը բերէին նոյնիսկ անսասան այս Վանքին ապահովութեան սպառնալ, լայնահոգի, համբերատար և յարատեւօրէն լաւատես բոլոր պայմաններու և պարագաներու տակ, ն. Ամենապատուութիւնը այն միակ ու յարմարագոյն անձնաւորութիւնն էր, որ ընտրուելով Գահակալ Ս. Աթոռին՝ պիտի կարենար սքանչելի իրականացնողը հանգիստնալ վերընձիւղումի վերեւ ակնարկուած հրաշքին :

Ապաւինելով օժանդակութեանը այնպիսի հաստատութիւններու՝ ինչպիսիք են Կիւլպէնկեան Հիմնարկութիւնն ու Հ. Բ. Ը. Միութիւնը, և միաժամանակ վստահելով մեր ժողովուրդի եկեղեցասիրութեան և Ս. Տեղեաց մէջ մեր ազգային իրաւունքները պաշտպանելու անոր պատրաստակամութեան, ն. Ամենապատուութիւնը որպէս «հովիւ քաջ» Ս. Յակոբեանց Միաբանութեան ղուլն անցած, չորս տարիներու կարճ միջոցի մը մէջ կը բացէր այս Հաստատութիւնը դուրս հանել անփառունակ և անշուք վիճակէ մը, վերահաստատել Հայ Պատրիարքութեան ազդեցութեան և յարգանքի ա՛յն չափը ու դիրքի ա՛յն բարձրութիւնը՝ որ Ս. Աթոռինն է եղած հարկւրաւոր տարիներ շարունակ, և հաստատուն հիմերը դնել այն մեծ աշխատանքին՝ որ կարելի պիտի դարձնէ աւելի լայն և խորունկ չափերու վրայ յառաջ տանիլ կրօնական և կրթական գործունէութիւնը այս Վանքին :

Կրօնական, կրթական, զրական և վարչական աստուածատուր իր ձիւքերը շաղախած մեր ժողովուրդի ապագային հանդէպ զգացուած անխախտ լաւատեսութեամբ, ն. Ամենապատուութիւնը լաւագոյն զրաւականն է նորանոր և աւելի արդիւնաշատ քառամեակներու, Ս. Յակոբեանց ազգապարծան այս Տան խաղաղ և անդորր կեանքին ու անսոյթաբ վերելքին :

Ազօթենք որ Ամենակարօյն Աստուած Իր հովանին անպակաս ընէ Ս. Աթոռոյս շնորհալի Գահակալին և անձնանուէր Միաբանութեան վրայէն, որ պէսզի անարգել շարունակուին վերակառուցումի և վերազարթնումի աշխատանքները՝ ի փառս Հայաստանեայց Ս. Եկեղեցիին և Հայ ժողովուրդին :

ԽՄԲ.

ԿՐԹՆԱԿԱՆ

«ԲԱՐԻ» ԵՐԻՏԱՍԱՐԴԸ

Տարօքէն գրաւիչ, խորհրդալից ու միանգամայն բարոյալից պատմուածք մըն է Նոր Կտակարանին մէջ Յիսուսի «բարի» երիտասարդին հետ հանդիպման դրուագումը:

Երիտասարդը մանկութենէն ի վեր լիռլի պահած էր Մովսիսական Օրէնքները — անթերի գործադրութեամբը Տասնաբանեայ պատուիրաններուն —, և սակայն կը զգար թէ տակաւին կատարեալ չէր ինք. թէ բան մը, կարեւոր բան մը կը պակսէր իրեն. և իր հոգիէն ներս տեղ բռնող այդ պտրապը լիցնելու համար կը դիմէ մեր Տիրոջ, յուսալով գտնել Անկէ յաղեցումը իր այդ պապակին:

Յիսուս կը նշմարէ զինք հեռուէն, կը հասկնայ անոր միտքը, մտածումները. կը սիրէ իր հոգիին «աղքատութեանը» զիտակից ու անոր փրկութեամբը մտահոգուող երիտասարդը:

Ու կու գայ հարցումը երիտասարդէն.

— Բարի վարդապետ, ի՞նչ ընեմ որ յաւիտենական կեանքը ժառանգեմ:

Ու Յիսուսի՝ Հին Ուխտի պատուիրանները պահելու թելադրութեան ի պատասխան՝ կը յարէ.

— Վարդապետ, առոնք ամէնը մանկութենէս ի վեր պահեր եմ ու ոչ մէկ բան պակաս ձգած:

— Մէկ բան կը պակսի քեզի. գնա ունեցածդ ծախէ և տուր աղքատներուն, ու երկինքը գանձ պիտի ունենաս. խաչը վերցուր և եկուր իմ հետէս:

Երիտասարդը պահ մը կը կենայ չուարուն, Յիսուսի իրեն ուղղած զօռար ու անսպասելի թելադրանքէն չշտմած: Կը խորհի երկարօրէն: Հոգեկանին և նիւթականին պայքարն է որ սկսած է ձեռք կերպարանք առնել իր մէջ. Այդ խօսքերով նոր ուղի մը կը դռուի իր առջև, ուղի մը ծառայութեան ու զոհողութեան, և նոր ու մեծ իրողութիւններու առջև կը գտնէ ինքզինք:

Հետեի՞ Յիսուսի յօժարութեամբ, ծախել բազմաթիւ ու թանկարժէք ստացուածքները, առնել խաչը ուսին. առոնք դժուար բաներ էին արդարեւ իրեն համար, հակառակ Հին Ուխտի Օրէնքին տրամադրութիւնները տառացիօրէն կիրարկած ըլլալուն իր կեանքին մէջ: Բարի ու Չարի պայքարը, աւա՜ղ, պահ մը ետք վերջ պիտի գտնէր իր հոգիին մէջ՝ երկրորդին յաղթանակովը, ու ան, տըրտմութեան քօղը դէմքին, պիտի հեռանար Յիսուսի քովէն յուսախար ու սրտաբեկ:

Յիսուս կը համակուի խոր տրամութեամբ, վասնզի Ան բոլոր մարդոց փրկութիւնը կը կամի: Աւելին՝ այդ իսկ պատճառաւ է որ եկած է աշխարհ: Ու կը դառնայ իր աշակերտներուն, ըսելով. «Իւրիքն է մալխոյ ընդ ծակ ասղան անցանել, քան մեծատան յարքայութիւն Աստուծոյ մտանել»:

Անշուշտ այս առաջին անգամը չէր որ մեր Տէրը կը խօսէր իրենց ինչքերուն յուսացած հարուստներուն և նիւթական ուժին դէմ: Նախապէս Ան պատմած էր արդէն անմիտ հարուստին առակը ու պատգամած թէ «ոչ կարէք Աստուծոյ ծառայել և մամռնայի»:

Սակայն հարուստներուն նկատմամբ այս վերջնական վճիռը կը զարմացնէ առաւել քան երբեք իր աշակերտները, որոնք անհամբեր ու հետաքրքիր կը հարցնեն իրենց վարդապետին. «Իսկ ո՞ր կարասցէ ապրիլ»: Ու Տէրը կը պատասխանէ. «Առ ի մարդկան այդ անհնարին է, այլ ոչ առ յԱստուծոյ. զի ամենեքեան կարելիք են առ Աստուած»:

Մեզմէ չատեր, զանազան առիթներով, կ'անդրադառնան իրենց գործած մեղքերուն, կը գիտակցին անոնց առատութեան ու բազմազանութեան, անոնց անազնութեան ու անաւորութեան, և տրտում ու յուսակորոյս կը բացագանչեն առաքելուներուն նման. «Այլ ո՞վ կրնայ փրկուիլ»:

Աստուծոյ անսահման զուլթն ու ներդաժտութիւնը, աննուազ սէրն ու անյիշատակութիւնը անգիտացողներն են որոնք կ'ուրանան այս թիւր մտածումը:

Ծիշդ է թէ մեր մեղքերուն գիտակցիւ, նախապայմանն է անոնցմէ ազատագրուելու և փրկութեան արժանանալու: Կեանքի որեւէ ասպարէզի մէջ յառաջդիմութեան համար խթան մըն է գիտակցութիւնը մեր յետամնացութեան և թերացումներուն: Եւ սակայն մեր մեղքերը անգիտանալուն և ինքզինք արդար նկատելուն չափ ծանրակշիռ յանցանք է նաև մեր մեղքերուն գիտակցելէ ետք զղջումի ու ապաշխարութեան դիմելու փոխարէն՝ նոյն ճամբան շարունակելու և մեղքերու շղթան անփութօրէն երկարելու ամբարըշտութիւնը, որ մեղքերու հոծութեան դիմաց փրկութեան ամէն յոյս կորսնցուցած ըլլալէն կը յառաջանայ: Ու Հկայ աւելի եղկելի արարած, քան յաւիտենական տանջանքի դատապարտուած ըլլալու գաղափարին հետ հաշտուած ու սանձարձակ կերպով ամէն մոլութիւններու մէջ խրած, իր վրդովուած խղճմտանքին անսուտ ու անլուելի ձայնը աշխարհի խուժ աղմուկին մէջ խեղդել փորձող ու այս աշխարհի քարիքներով լիանալու համար ամէն միջոցի դիմող անհատը: Վասնզի հանգերձեալ կեանքի հանդէպ անհաւատ կամ գայն ժառանգելու յոյսէն զուրկ անհատն է միայն որ ցոփ ու շուայտ կենցաղով մը կը ջանայ առաւելագոյն չափով երջանկութիւն քաղել այս աշխարհի անցաւոր արժէքներէն ու երեոյթներէն, ոչ մէկ խորութիւն դնելով միջոցներու մէջ:

Որքան արգահատելի են արդարև մարդերը, երբ յաւերժական կեանքի յոյսին լուսաշող պայծառութեան չեն բանար իրենց հոգիները, անով ցրելու համար առօրեայ հարցերուն անոնց մէջ առաջացուած դառնութեանց ու վնասութեանց թխպանոծ ամպերը:

Աշխարհիկ հաճոյքներու ծոցը խրած անհաւատին և իր հոգին երկնաւոր ճշմարտութիւններու լոյսին ու վայելքին քացած հաւատացեալին զգացած երջանկութիւնները բաղդատութեան հզոր իսկ չունին: Երկրորդին առաւելութիւնը կը կայանայ այն իրողութեան մէջ որ կեանքի ամենէն հաւաւոր ու անողոք իսկութիւնը — մահը — կը դարձնէ նուազ սարսափազդու: Աւելին, մերկացնելով մահը իր

քանդիչ զօրութենէն, կը վերածէ մեղ մեր երկնաւոր Հօր ու Անոր ներկայութեամբը պայմանաւոր անխառն ու անվախճան երանութեան տանող անցքի մը, ուրիշ ամէնքս ալ անվարան պիտի ուղէինք անցնիլ յօմարակամ ու աներկիւզ Եօրք է որ մահուան մատածումը չէ եղած դառն ու անասարսափ՝ աշխարհիկ վայելքներով բաւարարուիլ ձգող անհատին համար, որ անպայման կ'այցուի մահուան ուրուականէն, հերիք է որ իր կեանքի արեւը թեքի դէպի արեւմուտք և կամ առփական ցանկութիւններէ յաղեցած իր հոգին զգայ անբաւարարութիւնը այդ բոլորին՝ զինք լիացնելու, զո՞ ու անդորր պահելու, ու զգայ իրմէ ներս — նման «բորի» երիտասարդին — պարապ մը տնուոր՝ զոր Աստուծով միայն կրնայ լիցուել:

Երկրաւոր կեանքը, իր բոլոր վայելքներով ու հրապոյրներով, յընթաց դարուց չէ կրցած անխառն ու տեւական հրճուանք մը պարգեւել մարդկային հոգիին: Ծշմարտութենէ հեռու չէ այն խօսքը թէ «ոչ մէկ մարդ կրնայ իսկապէս երջանիկ համարուիլ իր մահէն առաջ»: Ու նոյնքան ճշմարիտ է հետեւութիւնն ալ այս հաստատումին: Վասնզի երջանկութիւնը, բոսին ամենէն հարազատ և խորունկ իմաստով, արքայութեան մէջ միայն կարելի է գտնել, ուր Աստուծոյ ներկայութիւնը կը չքացնէ ամէն վիշտ, իսկ տառապանքը, դարձեալ իր ամենէն հարազատ ու խոր իմաստով, գեհնինն մէջ, ուր Անոր բացակայութիւնը կը վանէ փրկութեան ամէն յոյս:

Եթէ, հաւատալով հանգերձ մահէն անդին անվախճան կեանքի մը գոյութեան, կը խորհինք թէ մեր դորձած ծանր մեղքերուն ի հետեանք դատապարտուած ենք անմասն մեղաւոր անոր վայելքներէն, չափաւոր կը սխալինք և մեր հաւատքը կ'ըլլայ ընդունայն:

Մարդկային հոգին միշտ ձգտումը ունի կատարելութեան, ու հաւատքը՝ թէ ո՞րքան մօտենայ այդ բաղձացուած հանգըրուանին, ա՛յնքան աւելի պիտի կրնայ ինքզինքը զգալ երջանիկ, անդորր ու ապահով:

Եւ սրպէսզի մտաշինք կատարելութեան, որ սերիշ րան չէ եթէ ոչ վիճակը սրբութեան, գիտակցելէ ետք մեր մեղքերուն, առնուելիք երկրորդ քայլը պէտք է ըլլայ անկեղծ սրտով ու կատարեալ հաւատքով ապաշխարել, զղջալ մեր հոգիի խորերէն և կրկնել Շնորհալի Հայրապետին նման. «Զի զղջացայց ի մեղաց»:

Պէտք չէ հաշտ ապրիլ մեղքին ու հորիքին հետ: Չարին չդաշնակից մը անտարակոյս սր թշնամի է Աստուծոյ: Մեղանշելու անխուսափելիութիւնը մեզ պէտք չէ մղէ ինքնարդարացման, բայց միւս կողմէն, մեր Տիրոջ ըստ երեսնի խիստ կեցուածքը մեղքին հանդէպ՝ թէ «որ բարկանայ եղբօր իւրում տարապարտաց, պարտաւոր լիցի դատաստանի», պէտք չէ որ զմեզ մղէ յուսահատութեան, և յուսահատութիւնը՝ լքուածութեան կամ նորանոր մեղանշումներու:

* *

Պահեր կան երբ խօսք մը, դրական կամ ժխտական պատասխան մը, կրնայ յեղաշրջել ուղղութիւնը մեր կեանքին ու փոխել անոր ընթացքը: Այդ պահերուն պարտինք աստուածային օժանդակութիւնը հայցել, իմաստութեամբ ու արթնամտութեամբ կարենալ ընտրելու համար լաւը, բարին, ճշմարիտն ու օգտակարը:

Երկրորդը հետ երիտասարդին հանդէպումը այդ ճակատագրական պահերէն մին էր: Պահ՝ որուն կապուած պիտի ըլլար անտարակոյս իր բովանդակ կեանքը:

Երիտասարդը կ'ուզէր երթալ Բարիին, բայց Չարը, սքօղուած դրամի և ինչքերու շողմ կերպարանքին տակ, արգելք հանդիսացաւ իրեն:

* *

Բարի երիտասարդին դուռագէն կըրնանք ուրիշ իրողութիւններ ալ երեւան հանել: Տասնարանեան, Հին Ուխտի Օրէնքը, չէր կրնար ըլլալ ամէն ժամանակի մարդոց յարացոյցը, ուղղիչը դէպի բարին, լաւն ու կատարեալը: Երիտասարդը, պահելով հանդերձ անոր թելադրած պատուէրները, կասեցաւ չէր զգար ինքզինքը: Քրիստոնէութիւնն էր որ կու

զար լեցնելու այդ Օրէնքին ձգած զգալի թերին, աւելցնելով անոր վրայ սրբազան ու վսեմ պատուիրաններ, ինչպէս՝ «Սիրէ՛րնկերդ քու անձիդ պէս» և «Սիրեցէ՛ք ձեր թշնամիները»:

Եւ արդարեւ, երբ ստուժնասիրենք Հին Ուխտի Օրէնքը, պիտի տեսնենք թէ սրոշապէս թերի է ան, վասնզի հոն չկան սիրոյ և մարդկային զգրայութեան գերազանցօրէն վեհ և շինիչ գաղափարները: Աստուած հոն կ'երևի իբր նախանձառ ու վրէժխնդիր Եհովան, և ոչ թէ իբրև գթառ ու նախախնամող Հայր բոլորին:

* *

Նայնր չէ՞ արդեօք պարագան այսօր մեզմէ շատերուն: Մենք ալ յաճախ չենք զգար մեր թերութիւնը, նսեմութիւնը, ու չենք փնտեր միջոցներ՝ զայն դարմանելու: Քանի՞ քանի՞ առիթներով մեր Տէրը կը մօտենայ մեզի, բայց մենք անտեղեակ՝ կը շարունակենք ընթանալ մեր մեղքերուն մօտայ ճամբէն, անգիտանալով իր ներկայութիւնը, նման Եմմաուսի ճամբորդներուն: Կը կարգանք երբեմն Աստուածաշունչը, սակայն կը յամենանք խաւարի մէջ, որմէ ազատագրուելու դարմանն է անոր մէջ՝ պատգամուած թելադրութիւններուն գործադրումը. կը նմանինք այն հիւանդին՝ որ իր հիւանդութենէն ազատուելու միջոցը — դեղը — ունի, և սակայն չ'օգտուիր անկէ, և կամ Աւետարանի յիմար կոյսերուն, որոնց եթէ պակասցան իմաստութիւնն ու արթնամտութիւնը միայն, մեզմէ շատ յաճախ կը բացակայի նաև անոնցմէ զատ ամենէն էականը — Հաւատքը:

Երիտասարդը գերադաս նկատեց նիւթը հոգիէն ու՝ դերի կղաւ առաջինին: Երանի՜ անոնց որոնք գիտեն ճիշդ հակառակը գործել: Անոնք են ճշմարիտ քրիստոնեաներն ու սուրբերը: Անոնցն է երկնքի Թագաւորութիւնը՝ որ պատրաստուած է արդարներուն համար «ի սկզբանէ աշխարհի»:

ԿԷՈՐԳ Ս. ՃԻՆՎԻԴԶԵԱՆ

ԵՐԲՈՐ ԵՐԿԻՐՍ ՇՐՋԵՅԱՅ ...

Երբոր երկիրս Երջեցայ անցեալ սարի մէջ առնան,
Քարասանի մը ննուող ցան ունեցայ սրիս խոր:
— Ուրա՛ն շրջայլ են եղեր ձեռքերը մայր-բրնուքեան
Եւ ընդերքներն հրաբուխին՝ փարածքա՛ւր, փարածոր ...

Ապառաժներ որոնց դէմ ես կանգնեցայ վճալի,
Ձեռներուս սակ ձեռքիս պէս երբեմն անոնի դողացին:
Կարծես խօսուն, ողբերգակ հին վրկաներն երբեմնի,
Քարե՛ր արեամբ մերթ քրջուած, եւ շիթերով արցունքին ...

Քարե՛ր իջած վիշտի պէս հողի սրտին մեր անէր,
Աւեր վանքի գմբէթէն ինկած մասեր ջարդ ու փուր,
Զրարքնոցի, Կառնի լուսաւաղա՛խ նշխարներ,
Դուք հայ սուգին նման ծա՛նք, խորհուրդի՛ն պէս ամրակուռ ...

Վերադարձիս՝ փա՛ր մը լուկ եւ ափ մը հող ուզեց մայրս.
Ձեզ բաժնեցի ծաղկի պէս՝ մեր հիւրերուն անձկալի,
Որոնց աչքին՝ արդէն դուք իրենց շրմին էիք մաս,
Բայց ներկային մեր շրջեղ՝ նիւթացած խո՛հ հայրենի ...

Քարե՛ր, փառե՛ր, Արգնիի՛ մէջ արդ կ'արժէ ձեզ տեսնել ...
Պալասաւէն պատերուն՝ իմաստացա՛ծ հրաւալիք ...
Ձեզ կը դիտեմ վերացած՝ որպէս ուժի՛ մ'անարգել,
Որպէս տունիս ապագայ՝ դուք՝ իրեն հի՛մ ու տանիք ...

ՄԱՌԻ ԱԹՄԱՃԵԱՆ

Փարիզ, 1962 Յուլիս 15



ԵՐԿԻՆՔԻՆ ԳԵՐՆԵՐՈՒՄ

Երկինքին վար, լեռներու վրայ եւ ձորամէջ
Անցներու խորն, ուր ստուերներ կը գեղերին,
Ամայութեան կ'իջնէ՝ սակաւ ֆողն, լուսառէջ
Խորհուրդին հետ աստղով բանուած մութ գիւղերին:

Եւ հոգիներ, որ խաւարի իսկ ընդմէջէն
Լոյս կ'որոնեն իրենց մտքի հոխ վայելքին,
Հիազարհուր՝ հոն աղօթքի քեզ կը կանչեն,
Աւարչական այդ գաղտնիքին, ուր սրբագին

Ձեռք մը անհետ կ'աստղազարդէ սնորհաբար
Երկինքն ամբողջ, եւ նրբարուեստ իր հիստուածով
Լուսազարդ՝ կը ջահաւորէ ձոր, լեռ ու սար,

Յանելով մեծ ու փոքր աստղեր հոն փոխէ փոխ:
Գիւղերուան այդ անմեկնելի սուրբ խորհուրդին՝
Տաղ ու ֆերբուած կ'ըլլան լուռ՝ մարդն ու իր հոգին:

ՀԱՄԱՅՆԱԿ ԳՐԱՆՆԵԱՆ

(Շրջառ — Լիբանան, Օգոստոս 1962)

ՏԱՐԻՆԵՐ ՎԵՐՋ

Տարիներ վերջ իսկ գուցէ
Կարդալ ուզես տղերն այս,
Երբ առ յաւէ՛ս՝ իրարմէ
Ըլլանք հեռու՝ դուն ու ես:

Տարիներ վերջ՝ սակաւին
Պիտի յիշեմ քէ ինչպէ՛ս
Օր մը գացինք միասին
Ամպերու պէս՝ դուն ու ես,

Երկինքին սակ երազուն,
Ու յանձնեցինք դաւեսերուն
Մեր սիրտերուն հետքն անհուն ...

Տարիներ վերջ՝ դուն ու ես
Երբ մոռցուինք աշխարհէն,
Դաւեսերը մեզ պիտի յիշե՛ն ...

ԶԱՒԷՆ ԵԿԷՆԵԱՆ

ՅԸ ՆԱՅԻՄ ՅԵԱՆՔԻՆ

Ա.

Կը նայիմ կեանքին,
Իր երկրէն զերուած
Յտարականի նայեացիս սրտում,
Իր ընկերներէն դաւուած, ուրացուած,
Այս աշխարհին դէմ դառնութեամբ լեցուած
Մարդու հոգիով,
Բեկուած ու խռով:

Կը նայիմ կեանքին,
Բիրս, ապերասան,
Ու ինձ կը քուի ամէն ինչ ունայն,
Անեունչ, անկայուն,
Երազի նման յաւէս խուսափուկ
Ու անիրական,
Ինչ որ կայ այսօր,
Մարդ, լեռ, ծառ, ծաղիկ, քաղ քէ անասուն,
Բոլորն ենթակայ
Կազմալուծումի օրէնքին դաժան:

Կը նայիմ կեանքին,
Շուար, տատանուող,
Իր միակ որդին կորուած մօր մը
Նայուածով վշտով.
Այնքա կը փնտռեն դեռ յոյսը ազօս
Իմ յոյսի աստիճան.
Խաւար է շուրջը, մութ՝ հեռուն ու մօտ,
Ամէն տեղ կեդերջ, հեծեծանք ու լաց,
Ու կը համակուիմ գողով մ'անծանօթ,
Կեանքիս վաղահաս աշունին պիմաց:

Գ. ՃԱՐՏԱՐ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉ ՎԱՐԴԱՆ

(15-ԲԴ ԴԱՐ)

Վաստակաւոր դրիչ Արիստակէս Սերաստացու 1408 թուին, Աւագ Վանքում, ընդօրինակած «Մանրութունք» ձեռագրի էջերի գեղեցկութիւնը կազմում են մանրանկարները, որոնց հմուտ վրձինով նկարազարդել է 15-րդ դարի հայ նկարչական մշակոյթի լուսադոյն գէմքերից Վարդան մանրանկարիչը, որի մասին, սակայն, հայ մամուլում մինչեւ օրս էլ որեւէ տեղեկութիւն լոյս չի տեսել, որով յայտնի չէ, թէ նա իր կրթութիւնը ժամանակի ո՞ր վանքի դպրոցումն է ստացել և ո՞ր վարպետ նկարչի մօտ մշակել է իր արուեստը: Պարզ է միայն այն, որ նա պատանեկան հասակից փայլել է իր նկարչական ձիրքով և հանդիսացել իր ժամանակի մշակութային պայծառ գէմքերից մէկը, իսկ ձեռագրերի յիշատակարանի տուեալների համաձայն նա ապրել և ստեղծագործել է գլխաւորապէս 15-րդ դարի առաջին կիսում, Դարանաղեաց գաւառի «Հոշակաւոր» և իր համալսարանով յայտնի Աւագ Վանքում, ուր վրձինել է ձեռագիր «Մանրութունք», ինչպէս այդ վկայում է յիշատակարանի հետեւեալ սեղմ տողը. «... նայ և զծաղկողս զվարդանս յիշեալ»:

Նա իր ամբողջ էութեամբ նուիրուել է հայ մշակոյթին և իր մանրանկարչական գործունէութեամբ նպաստել է 15-րդ դարի հայ նոր սերնդի և ժողովրդի գեղարուեստական ճաշակի զարդացմանը:

Ուշագրաւ է և այն, որ նա իր ինքնատիպ ոճով և իւրայատուկ արուեստով իր դարաշրջանում յայտնի է դարձել որպէս գոյների ու արուեստի հմուտ նկարիչ և ժողովրդից ու արուեստագէտներից սիրուել է ու յարգուել:

Նրա մանրանկարչական մշակոյթը հիմնականում ընթացել է զարդանկարչութեան գեղարուեստական ոճաւորման և դիմանկարչութեան ուղղութեամբ:

Նրա վրձինած զարդանկարներն ու խորանները, իրենց ոճային պատկերաւորու-

թեամբ և վառ երանգաւորումներով գրաւիչ են: Այդ մանրանկարները վկայում են, որ նկարիչը լաւ է ուսումնասիրել հին նկարչական արուեստի նրբութիւններն ու բանաստեղծական գեղեցկութիւնները. նկարները՝ որոնք լեզու են առնում և պատմում Աւագ Վանքի նկարչական դպրոցի և ծաղկող Վարդանի մանրանկարչական արուեստի էութեան, ձեւակերպումների ու նուաճումների մասին:

Թէ ո՞ր ձեռագիր մատենաներում և թանգարաններում պահուած են արուեստագէտ Վարդանի մանրանկարչական միւս գործերը, մեզ յայտնի չէ: Ո՛վ գիտէ, թերեւ, դրանք մոնղոլ և թուրք աւերիչ արշաւանքների ժամանակ հարստահարիչների կողոպուտներին զոհ են գնացել: Այդ տեսակէտից էլ մանրանկարիչ Վարդանից մեզ աւանդ մնացած «Մանրութունք»-ի մանրանկարները միջնադարեան հայ նկարչութեան պատմութեան համար թանկագին աւանդ են և ընդդժու են, որ արուեստագէտ Վարդանը միջնադարի հայ վարպետ մանրանկարիչների շարքում կարող է իր ուրոյն տեղը գրաւել:

Արձանագրենք և այն, որ ձեռագիր «Մանրութունք»-ի դրչական և մանրանկարչական արուեստները վկայում են, որ Դարանաղեաց գաւառի Աւագ Վանքը մի ժամանակ եղել է հայ մշակոյթի մի նշանաւոր կենտրոն, ուր փայլել են տաղանդաւոր մանրանկարիչներ, գեղագիրներ, ոսկողներ, զարդանկարիչներ և վարպետ դրիչներ:

15-րդ դարի այս արժէքաւոր ձեռագրի լուսադոյն մանրանկարները, անկասկած, մտնելու են հայ բաղձադարեան նկարչական մշակոյթի գանձարանը, միաժամանակ ծաղկող Վարդանի պայծառ անունն ու յիշատակը գեղարուեստասէր սերունդների սրտերում անմոռաց են պահելու:

Նշենք և այն, որ նկարազարդ «Մանրութունք»ը միջնադարի հայ երաժշտական արուեստի պատմութեան համար նոյնպէս մի թանկագին աւանդ է: Այնտեղ յիշատակուած է «բաղմերախտ, պատուելի և հեղահոգի» Տէր Սահակ երաժշտապետի անունը, որ 15-րդ դարի հայ երաժշտական արուեստի զարդացման խնդրում մեծ ծառայութիւն է մատուցել:

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

ՓԵԽԵԼԻ

ԺԸ. ԴԱՐՈՒ ԵՐԿՈՒ ԶԵՌԱԳԻՐՆԵՐ

Ա.

ԿԱԹՈՂԻԿԵՈՒԹԻՒՆ ԼՈՒՍԱՆՈՐԶԱԳԱՒԱՆՑ

ՀԻՆ ԹԻՒ 7 — 1781

Կազմ՝ հին արևելեան խառաքարաւայ կաշեպատ, Մեծաւրիւն՝ 17.5 × 11.5: Թուղբի՝ 210: Դուրբիւն՝ միասիւն: Դիւր՝ նաւար-դրածէ շեղագիր: Հանգամանք՝ լաւ պահ-ուած: Դասարկի՝ Թղ. 1, 2, 206բ, 210: Խորագիրք եւ սկզբնասով՝ կարճագիր: Դրիչ՝ Մարտիրոս սարկաւազ: Տէր՝ Գրիշը: Տեղի՝ Պալիս, Իւսկիւտարի Սեւաժիէ Թաղ: Ժամանակ՝ 1781: Յիւսակարանք՝ 183բ, 205բ: Տեղեկութիւնք՝ սեփականութիւն Պր. Ասոյ տ Տօնապետեանի:

Մասեանս է՝ Կարողիկեութիւն Լուսաւորչապետեանց, ուր կան.

1. — Թղ. 3ա. «Կաթողիկէութիւն Լուսաւորչապետեանց համաձայն հին ընդհան-րական եկեղեցւոյ: Յաջեալ խզ վկայու-թեամբք սրբոյն Դիւնիսիոսի Արիսպա-զացւոյ անուանեալ զրքին, ի Կոստանդ-նուպօլսեցի Դեռզ վարդապետէն, ի նախա-տինս եւ յամօթս յաւիտենական . . . ախ-թարմայից մերոց: Թուին հայոց ՌՃՂԹ» (1750):

2. — Թղ. 3ա. «Առաջարանութիւն, Թուին հայոց ՌՃՂԸ, եւ վերջինս վար-դապետաց հայոց ընթերցայ հեղինակներէն զսրբոյն Դիւնիսիոսի Արիսպազացւոյ ան-ուանեալ զիրքին, ի Թաղն Պէկօլիս» են.:

3. — Թղ. 5ա. «Յանկ Գրքին»:

4. — Թղ. 8ա. «Վկայութիւն առաջին, մասն առաջին: Յաղազս առւր ծննդեան տն մերոյ յսի քսի: ի մէջ զրքին յաղազս երկնաւոր քահանայապետութեան» են.:

5. — Թղ. 35ա. «Մասն երկրորդ: Յա-ղազս միայնեղործութեան քսի, երկրորդ տես ի մէջ սոյն այս վկայութեանս, թէ շարդրողն զրքին զնեղործութիւն յսի մարդկային աստուածութիւն է անուան-եալ» են.:

6. — Թղ. 38ա. «Վկայութիւն երկրորդ: Յաղազս ճշմարտութեան աւետարանացն

հայոց: Դարձեալ ի մէջ զրքին երկնաւոր քահանայապետութեան ի վերայգրեալ տե-ղին զրեալ է այսպէս» են.:

7. — Թղ. 43բ. «Վկայութիւն երրորդ: Յաղազս անփոփոխ պահելոյ զառաքելա-կան աւանդութիւնսն: ի մէջ զրքին յա-ղազս եկեղեցական քահանայապետութեան» են.:

8. — Թղ. 46ա. «Վկայութիւն չոր-րորդ: Յաղազս երեք ընդլծամբ մկրտե-լոյ, եւ յաղազս ի մասին ընդ մկրտու-թեան տալոյ զրոշմն» են.:

9. — Թղ. 46բ. «Վկայութիւն հինգե-րորդ: Յաղազս զրոյսը մարմին մկրտե-լոյ» են.:

10. — Թղ. 47ա. «Վկայութիւն վեցե-րորդ: ա. Մասն առաջին: Յաղազս նշա-նակութեան մկրտութիւն բառին» — բ. Թղ. 47բ. «Յաղազս փրկարար մահուան բանին այս» են.:

11. — Թղ. 56բ. «Վկայութիւն եօթնե-րորդ: Յաղազս հարկաւորութեան զրոշ-մին, նոյն ժամայն յաւ մկրտութեան» են.:

12. — Թղ. 57ա. «Վկայութիւն ութ-ներորդ: Յաղազս հարկաւորութեան հա-ղորդելոյ ի մարմնայ եւ յարեանէն Բի յաւ մկրտութեան» են.:

13. — Թղ. 57բ. «Վկայութիւն իննե-րորդ: Դարձեալ յաղազս նոյն հարկաւոր-ութեան»:

14. — Թղ. 58ա. «Վկայութիւն տաս-ներորդ: Յաղազս խնկարկելով շրջադա-յելոյ պատարագողին ընդ ամենայն դաս»:

15. — Թղ. 58բ. «Վկայութիւն մեռա-սաներորդ: Յաղազս արտաքս զերախոյս ի պատարագէն եւ թէ սյք են երէխայք»:

16. — Թղ. 59ա. «Վկայութիւն երկո-սասաներորդ: Յաղազս արտաքս եկե-ղեցւոյ կանգնելոյ այնոցիկ, որք ոչ հա-ղորդին»:

17. — Թղ. 59բ. «Վկայութիւն երեք-սասաներորդ: Յաղազս ի դրունս տաճա-րին կանգնելոյ զպրաց»:

18. — Թղ. 60ա. «Վկայութիւն չորեք-սասաներորդ: Յաղազս ողջոյն տալոյ միմեանց ի պատարագին»:

19. — Թղ. 60բ. «Վկայութիւն հնգե-սասաներորդ: Յաղազս նորամուտ լինե-լոյն ջրախառնումն պատարագին» են.:

20. — Թղ. 60բ. «Վկայութիւն վիշտասաներորդ: Յաղագս հանդերձ պաշտօնէիւք պատարագելոյ» են.:

21. — Թղ. 62ա. «Վկայութիւն եօթնեւտասաներորդ: Յաղագս ամենեքեան ի միմէ հոցէ հաղորդելոյ» են.:

22. — Թղ. 62բ. «Վկայութիւն ութնեւտասաներորդ: Յաղագս հաղորդութեան ի հոցէ և ի բաժակէ» են.:

23. — Թղ. 67ա. «Վկայութիւն իննեւտասաներորդ: Յաղագս խորհրդաւոր լինելոյ, խնկարկելով շրջագայութիւն պատարագսդին» են.:

24. — Թղ. 68ա. «Վկայութիւն քսաներորդ: Յաղագս հարկաւորութեան երգարանութեանց պատարագին»:

25. — Թղ. 69ա. «Վկայութիւն իա: Յաղագս հարկաւորութեան և խորհրդաւորութեան ողջունիւ պատարագին» են.:

26. — Թղ. 70ա. «Վկայութիւն իբ և իգ: ա. Մասն առաջին: Յաղագս մասնակցութեան ի միմէ հոցէ, ի միմէ բաժակէ» են.:

բ. Թղ. 71ա. «Մասն երկրորդ: Վիճարանութիւն յաղագս միայնութեան Քսի» են.:

27. — Թղ. 97ա. «Վկայութիւն իգ: Յաղագս մեռսնին ի յիւզոյ ծաղկանց» են.:

28. — Թղ. 97բ. «Վկայութիւն իե: Յաղագս ոչ կատարելոյ մկրտութիւն առանց դրոշմի» են.:

29. — Թղ. 98ա. «Վկայութիւն իգ: Յաղագս առնելոյ զհոգին որ ի ձեռն դրոշմին» են.:

30. — Թղ. 98բ. «Վկայութիւն իէ: Յաղագս ծայրագոյն քահանայապետ լինելոյն ամենայն հայրապետաց» են.:

31. — Թղ. 99ա. «Վկայութիւն իբ: Յաղագս ոչ լինելոյ մկրտութիւն առանց դրոշմի» են.:

32. — Թղ. 99բ. «Վկայութիւն իթ: Յաղագս միայն գոյութեան Քսի» են.:

33. — Թղ. 100ա. «Վկայութիւն ի: Յաղագս համակարգ լինելոյ ամենայն առաքելոց» են.:

34. — Թղ. 107ա. «Վկայութիւն լա: Յաղագս խորհուրդ և կեղեցւոյ լինելոյն մեռսն օրհնելոյն, և կարգ կատարելոյն ի վերայ ննջեցելոց» են.:

35. — Թղ. 110ա. «Վկայութիւն լր: Յաղագս օծելոյ ննջեցեալ քահանայ» են.:

36. — Թղ. 110բ. «Վկայութիւն լգ: Յաղագս կատարեալ հատուցման, ի հատուցման ի յարութեան շուարն» են.:

37. — Թղ. 111ա. «Վկայութիւն լգ: Յաղագս լուսաւորութեան ամենայն հայրապետաց» են.:

38. — Թղ. 125բ. «Վկայութիւն լե: Յաղագս խորհրդաւորութեան օծելոյ ըզննջեցեալ քահանայից» են.:

39. — Թղ. 126ա. «Վկայութիւն լգ: Յաղագս հաղորդելոյ զմանկունս» են.:

40. — Թղ. 126բ. «Վկայութիւն լէ: Յաղագս հարկաւորութեան հաղորդելոյ զմանկունս» են.:

41. — Թղ. 127ա. «Վկայութիւն լը: Յաղագս ըղիման հոգւոյն սրբոյ ի հօրէ միայն» են.:

42. — Թղ. 129ա. «Վկայութիւն լթ: Յաղագս նայն բանիս» են.:

43. — Թղ. 129բ. «Վկայութիւն խ: Յաղագս միայն երգարծութեան Քսի» են.:

44. — Թղ. 130ա. «Վկայութիւն խա: Յաղագս հաստատութեան ամենայն հայրապետաց» կային:

45. — Թղ. 131բ. «Վկայութիւն խբ: Յաղագս նորամուտ լինելոյն պատմութիւն շնացող կնոջն ի մէջ աւետարանին յօհաննու» են.:

46. — Թղ. 138ա. «Վերագրեալ քառասուն և երեք վկայութիւնքն հելլինացիբէն» (յունարէն):

47. — Թղ. 147ա. «Խորհուրդք սրբոյն Դիոնիսիոսի Արիսպաղացոյ անուանեալ զբքին. արտահանեալք և թարգմանեալք բառ առ բառ ի հելլինացւոց լեզուէն ի հայ բարբառ, խորհուրդ լուսաւորութեան: Քահանայապետն որ կամի, զի ամենայն մարդիկք մի ընդ միմէ» են.:

48. — Թղ. 151բ. «Խորհուրդ կատարման մեռսնի: Ըստ նայն ժողովման կերպի, անկատարից կարգքն արտաքսին» են.:

49. — Թղ. 152բ. «Խորհուրդ քահանայական կատարմանց: Քահանայապետն որ առ քահանայապետական կատարումն օծի» են.:

50. — Թղ. 152բ. «Խորհուրդ սքեմաւորական կատարման: Քահանայն կանգնի առաջի աստուածային սեղանոյն» են.:

51. — Թղ. 153թ. «Առհրուրդ ի վերայ սրբազնարար ննջեցելոց: Ածային քահանայական ժողովեալ զսրբազան դասն» ևն.:

52. — Թղ. 154ա. «Եզրակացութիւն թարգմանողին: Ուր է աստ վերջին օծումն ֆրանկաց» ևն.:

53. — Թղ. 163թ. «Վերջ գրքիս: Ընթերցողն գրքիս այսորիկ դատեսցէ այժմ, միթէ դայսպիսի գրեանս ընթերցողն կարող է, թէ կամենայ ևս ֆրանկ դառնալ» ևն.:

54. — Թղ. 166ա. «Թուին հայոց ՌՃՂԹ, որ է այս տարիս» ևն.:

55. — Թղ. 168ա. «Յանկ և ցուցակ այբբենական նշանաւոր իրաց մասենիս, յսրում համարն, զերեսս թղթոցն ցուցանէ: Եթե արժայից մերոց ուղղութիւն» ևն.:

56. — Թղ. 185ա. «Թուղթ ան Գրիգորիայի հայոց կաթողիկոսի, զրեալ է յեղբորէ նորին Ներսէս կաթողիկոսի հրամանաւ նորին, ի միջագետս ասորոց: Յամայք կոչեցեալ նահանգին յաղագս մերոյ ազգիս քահանայից երկարաբանելոյ անմըտարար ընդ միմեանս: Ոմանց ասել զածութեան բնութիւն չարչարեալ, և մեռեալ ընդ մարմնոյն: Եւ ամանց զմարմինն միայն: Եւ արդ զիցաւք զբանս նախ առ այնոսիկ որ զբնութիւն Աստուծոյ յանդգնին ասել չարչարեալ և մեռեալ ի վերայ խաշին» ևն. (Հմտ. Ընդհանրական Թուղթ Սրբայն Ներսէսի Շնորհաւայ, տպ. Երուսաղէմ, 1871, էջ 240-289):

57. — Թղ. 194ա. «Թուղթ երանելոյն Ներսէսի հայոց հայրապետի առ Մանուիլ թագաւորն հռոմոց: Խոստովանիմք որպէս ուսաք ի հարցն սրբոց զօրն յատկութիւն առանձնաւորութեանն անծին և անսկիզբն» ևն. (Հմտ. անդ, էջ 120-130):

Յիշատակագրութիւնք. —

1. — Թղ. 183թ. «Փառք ... Որոյ կամօք և ազդեցութեամբն դէպ եղև ինձ բազմայանձինս, ի ՌՄԼ (1781), յունվարի Ը հանդիպիլ մեծիմաստ և յոգնահանձար յարգելի Սեփաննոս Ամիրային, առ ի շնորհաւորել զսր ծնունդն Քսի առն մերոյ, ընդ որոյ և յետ երկար խօսակ-

ցութեան ի վր ճշմարիտ հաւատոյ և օրինացս մերոց, հանեալ զայս ազգու և զամենահատու սուրս, որ ընդդէմ ընտանի թշնամեացն մերոց, աղուեսարարոյ խորհրայից և հերձուցողաց (որ է առաջին [Ննջում «ձեռագիր» բառը. փակագիծը իրն է] հեղինակի պատուական գրքոյս) եցոյց ինձ, և ևս մինչ անսի, իսկոյն սաստիկ ըղձիւ հարայ ի սէր սորո, որ և նա յօժար սրտիւ ստիպեաց զիս զանորժանս օրինակել ըզսոյնս: Եւ ևս բազմամեզս առեալ զսա զուարթաղին զիմօք և մեծաւ ուրախութեամբ, համարելով զիս մեծագոյն իմն դանձի հանդիպեալ, սկսայ զրել և օրինակել ի ՌՄԼ (1781) մերում թուականի, յունվարի ի. ին. մեծաւ զգուշութեամբ, զի մի տառ ինչ ի բառ սպըրդիցի և կամ բառնիցի: Եւ տնտեսցաք զսա, զի որոշեալ արոհեցին նշանաւոր բանքն և և Գ վկայութեանցն գրքիս: Այլ և արարաք զհամալուստ ցանկ գլխաւոր իրաց, որք պարունակին այսմ գրքով, զի խնդրողքն զիր ինչ անաշխատ առեւոն պատրաստ գտանիցեն՝ համարելով երեսոց թղթոցն: Եւ զի վերաժամանեցին սմանք գործք հարկաւորք, վս այն մնաց անկատար. սոյնս սակաւ ինչ ժամանակս, և յետոյ սկսեալ վերստին. գտաւանալով ըզժամանակս աւարտեցաք ի ի և թ յաւիտի:

Արդ՝ որք հանդիպիք այսմ նոր և չըքնաղ հակաճառութեան գրքոյս, որ ընդդէմ երկարակաց խօսի, համեղ և համառօտ վարդապետութեամբ ջատագովելով զճշմարտութիւն հաւատոյ և զաւանդութիւն առաջին և հին կաթողիկէ ամենասուրբ եկեղեցւոյն քի, զոր և այժմ մեք ունիմք հայաստանեայցս սր եկեղեցի, և օգտիք ի սմանէ յիշեցէք ի մաքուր ազօթս ձեր, նախ՝ զշարագրողն գրքոյս զար Դեոդ բազմաշխատ և զածարան վարդապետն, Երկրորդ՝ յիշեալիք զվերողրեալ տուօղն ինձ զօրինակն սորին զչքնաղիմաստ, քաջազէտ և զգերզգօն Ակնեցի Պետրոսեան Սեփաննոս օրհնեալ զջատագովել ճշմարիտ հաւատոյս մերոյ: Երրորդապէս յիշեալիք ի քս և զիս զյոգնամեզս, որ մեծաւ փափազանօք օրինակեալ գրեցի զսոյն, ի վայելումն իմ և յիմայնոցն, և ի յիշատակ ապագայ եկեղեցն,

այլ և ի յօգուտ հետնեալ մուրհիւցն մերայնոց, ընդ հովանեաւ մեծաճշակ և սքանչելարար և ամբնկալ կենսատու խաչին սբյ, որ ի Սեւմիյէ քաղն իւսկիւսարու, զյատկապէս անարժան սպասուորոյս նոյն սրբութեան, որ և եմ պատրաստական ծառայ ուղղափառ ազգիս հայկազնոյ՝ Մարտիրոս սարկաւազ Կոստանդնուպօլսեցի»:

2. — Թղ. 205բ. «Սիրով ծանիք լուսաւորչադաւան և ուղղահաւատ ազգդ ի հայոց, զի գտլով իմ սիրահար ուղղափառ դաւանութեան և բանից սր և երանաշնորհ նախնեացն մերոց, տեսեալ զերկուս թուղթս սբյն Ներսէսի Լամբրոնացւոյն, մեծաւ փառապանօք օրինակեալ եգի ընդ պանծալի գրքոյս ի մի տուփ, իբր զկնիք և զվկայ ճշմարիտ բանից վարդապետիս»:

Արդ՝ ով ամասէր և բարեմիտ ընթերցողք յորժամ ընթեռնոյք զսա, և կամ շահիք ինչ ի սմանէ, յիշեցէք ի սր աղօթս ձեր զիս զաշխատօղս սորին՝ զամենամեղ անարժան Մարտիրոս սարկաւազս հանդերձ համայն ննջեցելովք իմովք, որ և յիշողքդ յիշեալ լիջիք և քսէ փրկչէն մերմէ ի յաւուրն յետնում, ամէն»:

Օրինակեցաւ սա ի հայրապետութեան տն Դուկասուռ ամ հայոց կաթողիկոսի, և ի պատրիարքութեան երկուց աթոռոցն սբյն եէմի և կոստանդնուպօլսոյ, տն յովակիմայ և տն Թօմասիսի ճգնազգեաց արքեպիսցն: Եւ մի տն 1781, և ի մերում թուականին ՌՄԼ յօգոստոսի Ա, ի Սեւմիյէ, ի թաղն իւսկիւսարու»:

Բ.

ԱԿՆ ԼՈՒՍԱՏՈՒ

ՀԻՆ ԹԻԻ 8 — 1780

Կազմ՝ հին արեւելեան խաւաքարտեայ կաշկապտ, վրան ճնշուած զարդերով: Մեծութիւն՝ 17.5 × 11: Թուղթ՝ 185: Նիւր՝ թուղթ: Գրութիւն՝ միասին: Գիր՝ նոսրագիր: Տղթ՝ 22: Հանգամանք՝ լու պահուած: Դասարկի՝ 1, 2, 3բ, 30բ-32, 33բ, 157-160, 181բ-185: Խորագիր՝ կարմրագիր: Գիր՝ Ստեփաննոս: Տղթ՝ հաւանաբար Կ. Պալիս: Ժամանակ՝ 1780: Բիւստակալութիւն՝ թղ. 150ա:

Մատենա է՝ ԱԿՆ ԼՈՍԱՏՈՒ, սկիզբը՝ թղ. 3ա. ի մէջ ազեղ չըջանակի մէջ առնուած:

1. — Թղ. 4ա. «Մանկունք սբյ եկեղեցւոյ իսկ պարտին, ի սկիզբն մինչ ի վախճան աւարտին, ըզսր գրեանս քննել որք են ի քարտին, ըստ Յօնանու բանին որ տնէ հրամանին» ևն: 9 տուն, սկզբը՝ նագիրք «Մանուէլի ե» կը կազմեն:

2. — Թղ. 5ա. «Առ ազգեցութիւն իմն բարեմիտ ընթերցողս: Իսկանն բան և բնութենական որդին հօր այ և յաւիտենական ծնունդ» ևն: Վերջը՝ թղ. 30ա, ուր վարի լուսանցքին վրայ գրուած է. «Տրուպ ծոյ քսի Սրմաֆէ փոքրիկ Մանուէլ Թեոդորոսեան. միայն ևեթ դպիր տոհմիւ Կեսաբեան»:

3. — Թղ. 33ա. «Իրք սր կոչի ԱԿՆ ԼՈՍԱՏՈՒ: Հայրապետութեան գերագահ աթոռոյն աստուածաբիշի տեառն Մինասայ սրբազնակատար կաթողիկոսի, և ինքնակալ քահանայապետի ամենայն հայոց: Եւ ի պատրիարքութեան սրբոյն Սաղիմայ տեառն Թեոդորոսի վեհափառ և արհիւպիսկոպոսի: Եւ ի պատրիարքութեան տեառն Յակոբայ մեծի պօլսոյս արժանաժանագ պետի և հաշակաւոր ամառանի ի թվին ՌՄԱ: Հաւաքեցեալ և շարադրեցեալ ի Սրմազէշ և փոքրիկ Մանուէլէ կոստանդնուպօլսոյ կեսարեան, ընդ հովանեաւ բազմաթողիկեկեղեցւոյ սրբոնոյ աստուածածնին»:

4. — Թղ. 34. «Յաղագս թէ զինչ իցէ եկեղեցին: Եկեղեցին է ժողովուն ամենայն հաւատացեալոց, ենթարկեցեալ ուղղափառ հաւատոյ և դաւանութեան» ևն: Վերջ՝ թղ. 150ա:

5. — Թղ. 150ա. «Տեսիր եղբայր Քալկեդոնի ժողովն կանոնեաց թէ հաւատար գաւազութիւն ունիցի աթոռն ըստամպօլու, ըստ հին հօմայու, ըստ ժողովոյն ձջ սուրբ հորցն» ևն:

6. — Թղ. 151ա. «Յանկ որ ցուցանէ զթղթահամարան, առաքելոց իշխանութիւնքն ամանցեցան, ի յաջորդս, և ոչ անսուանքն» ևն:

7. — Թղ. 161ա. «Վիճաբանութիւն յաղագս բնութեան քրիստոսի»

ԻՐԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ՔՈՒՂԹ ԿԵՂԵՍՏԻԱՆՈՍԻ ԱՌ ՆԵՍՏՈՐ

Թղթաց Գիրքը կը պարունակէ հայերէն թարգմանութիւնը Հռոմի կեղեւտիանոս եպիսկոպոսին առաջին թուղթին ուղղուած նետադրի։ Այդ թուղթը սակայն թերի է, Թղթաց Գրքին ձեռագրին մէջէն թերթ մը ինկած ըլլալուն պատճառաւ։ Այդ թերթին լրացնելու մտքով պատրաստեցինք ներկայ յօդուածը։

Իբրեւ բնագիր առինք Ս. Աթոռոյս ձեռագիրներէն թիւ 960 ժողովածոյին պարունակած թուղթը, համեմատեցինք զայն ուրիշ երեք ձեռագիրներու և տպագրեալին հետ, և նշանակեցինք կարեւոր տարբերութիւնները։

Ստորեւ կու տանք մեր համեմատութեանց մէջ դարձածուած նշանագիրները և համապատասխան օրինակներուն մասին հակիրճ ծանօթութիւններ։

Ա = Զեռ. Ս. Յ. Թ. 960, թկ. 1602, ժողովածոյ, նստրագիր, էջ 390-393։

Բ = Զեռ. Ս. Յ. Թ. 1138, թկ. 1668, ժողովածոյ, նստրագիր, էջ 693-5։

Գ = Զեռ. Ս. Յ. Թ. 999, թուական նորագութեան 1668, ժողովածոյ, մասամբ

Տես զի տէրն մեր Յիսուս Քրիստոս ըստ բնութեան մի անուանի, անուամբ բնութեան ի միակի թուոյ զածութեան նորա, իմանալով» ևն.։ Վերջը՝ «Այս պատրոյ մինն վերոյիշեալ պատրի յակօրն էր, որ այսպէս բազում անգամ յաղթահարեալ և խայտառակեալ ի յօհաննէս վարդապետէն և ակամայ ճանաչել զճշմարտութիւնն, տպտպագրել ևս ի հօմ քաղաքի, զվերսգրեալ վկայութիւնն մեր յաղագս միոյ բնութեան քսի ի մէջ մեկնութեանն Աւետարանին իւրոյ» ևն.։

Յիւսակագրութիւն. «Ստեփաննոս քարտուղարէ գրեցեալ տպրիլ ՌՄԻԹ»։

ԱԻԵՏԻՍ ՆԵՐՍԷՍԵԱՆ

Պէյրաթ

բուրգիր և մասամբ նստր, էջ 553-5, նստրագիր։

Դ = Զեռ. Ս. Յ. Թ. 858, թկ. 1686էն առաջ, ժողովածոյ, նստրագիր, էջ 517-9։

Ե = Գիրք Թղթաց, Թիֆլիս, 1901, էջ 241-2, վերջը թերի։

Երանելոյն Կելեսիմոսի Եպիսկոպոսի Հռոմ, բուխր առաջին առ Նեստր։

Ոչ գիտեմ ուստի ի մերս հասանել⁽¹⁾ լսելիս, իբր թէ հաւատ իմն հեղեալ⁽²⁾ ի քէն նորածեա, որ է արտաքոյ բարեպաշտութեան, այլ զլուր քոյոց հաւատացող անաեւ արարաք, քանզի զարմացում մերձ է առ մեզ, եթէ դու որ յիմաստութիւնսն մեծագոյնս խորհեցեալ, և վայելիցս գիտութեան բարձրութիւն բարձրացեալ, զիարդ այդպէս վաղվաղակի յանգիտութեանց ընկղմեցար խորխորատ։ Իսկ եթէ այսպէս որպէս բանս հաստատէ, թշնամանեալ լինի ուրիմն ի քէն Երրորդութեանն⁽³⁾ համագոյութիւն, ուրացեալ լինի և արժանաւոր պատիւ Աստուածածին⁽⁴⁾ Մարիամա։ Վասն որոյ պատշաճաբար համարիմ ըստ քեզ և առ քեզ և ընդդէմ քս զասացեալն որ գոչելով աղաղակէ, եթէ բազում զպրութիւնք զքեզ ի մուրութիւն զարձուցին։ Բայց ես ոչ զարձուցին միայն ասեմ այլ և զանցուցին ևս։ Քանզի ձգեցիր զձեռս քս առ ի յաստուածամարտութիւն, և զօտի ամեալ տարեալ եղեր ուր ոչն կամէիր, և ոչ գիտէիր. զի թէ էր գիտացեալ, ոչ արդեք զԱստուած խորհէիր առնել⁽⁵⁾ քեզ ընդդիմամարտ, և կամ ընդդէմ խթանի տքացել⁽⁶⁾, որ ոչն էր քեզ կարողական։

Ուստի և վայելուչ կարծեմ յաղագս քս առնուլ զմօռէսեան ձայնն⁽⁷⁾ վոխ, և սուղ ինչ այլաբանելով ընդ քս յեղափոխութեան հաւատացող, մանաւանդ թէ յանհաւատութեանդ կամաց, ասեմ, այս այլ յիմար և ոչ իմաստուն, ո՞չ սա ինքն է

(1) հասանէ, ե։

(2) յեղեալ, ե։

(3) Երրորդութեանն, Դ։

(4) Աստուածածինին, ե։

(5) առնել, Ձունի, ե։

(6) տք ամեւ, Բ Գ Դ։

(7) զՄօռէսեանն ձայն, ե։

հայրն քո որ ստացաւ, արար և ստեղծ զքեզ, և դու զայդ Տեառնդ հառաւանս. քանզի Աստուած գոյով ստացաւ զքեզ, և էած յանդգութենէ ի դոյութիւն, իսկ դու անստացար զբազմադին մարգարիտն Քրիստոս, և ոչ նարովթայ արեանն գոչելով յերկրէ զնայն գունակ ի քեզ բերելով նմանեցուցեր: Քանզի նա ի հայրենի ժառանգութեանցն զրկել ոչ առնայր յանձն, և զմահ յաղագս այնորիկ կրէր, իսկ դու զհարցն նախասահմանաւ ի քեզ հաւատա ի բաց մերժելով զրկեցար, և փախտական եղեր իբրև զամբարիշտն ոչ հալածեալ:

Եւ այժմ մեր այսչափ աղաչելովս և նախակոչելովս զքեզ, ոչ կամիս դառնալ որպէս զնմանին քո Ասայէլ, որ երբեմն հալածելով զԱրեւնիս յաւասցեալ ի յիւրոցն արադութիւն ստից, ոչ կամեցեալ լսել աղաչանացն մինչև զանխողութեանն ժողովեաց զվարձ, նայն ժամայն խոցեալ կայր մեռեալ յերկրի հանգերձ մատնչօքն իւրովք սախլք: Վասն որոյ և ես քեզ խրատ տամ՝ ստիցդ քոց ոչ հաւատալ զքեզ. քանզի օձն դարանակալ է⁽⁸⁾ հարկանել զգարչապարտդ, այլ մանաւանդ գլխոյդ՝ եթէ իցէ Քրիստոս, յորմէ ամենայն մարմինն յօդիւք և խաղալեալք տարաբերեալ⁽⁹⁾ և խառնեալ աճէ զաճումն Աստուծոյ:

Ապա թէ ոչ հաւանեցիս⁽¹⁰⁾ դառնալ յընդունայն և⁽¹¹⁾ յանսուրբ մոլորութեանէդ, մեք⁽¹²⁾ ընդդէմ քո զվճիռ⁽¹³⁾ չնորհին արտաձայնեցաւք. քանզի չէ պարտ զսրբութիւնս շանց տալ, և կամ զմարգարիտն առաջի խզից: Քանզի ո՞յր արդեք զքեզ տեսանելով ի բարեպաշտութենէն յամբարշտութիւն հաստատեալ⁽¹⁴⁾, և ոչ զարմացի, և կամ ո՞յր զայդպիսի լսելով համբաւ, և ոչ երկաքին հնչեցին տկանջքն: Քանզի զիս⁽¹⁵⁾ տակաւին ար-

տասուք պաշարեն, տեսանելով զհովիւդ տալալեալ (զայլ եղեալ?), և զիւրդ կերեալ զհաւա⁽¹⁶⁾, ոչ մարմինս ի հոգոց պահանջեալ այլ զհոգի ի մարմնի սպանեալ. դարձեալ և զվարդապետդ անզգամ զնախամարիկդ, այժմ պատերազմող եկեղեցոյ, զերբեմն արբանեակդ Քրիստոսի, այժմ բնակարան նեռինն, զերբեմն հայրապետդ, այժմ հերձուածողապետ, որ երբեմն զմայրաքաղաքս հովուելով, այժմ ի կորուստ մատնեցեր. նաև ոչ Յուդայի⁽¹⁷⁾ այնքան մեղադրեմք մատնելով զՔրիստոս Հրէիցն, որքան քեզ կործանելով զհաւատդ: Քանզի նա կաշառառութեամբ յայնպիսի յանդգնեցաւ գործ, իսկ նանրութեամբ իմաստնացեալ այդպիսի գտար դրժող. փոքր միւս ևս յուսամք թէ արդեք

ապա եթէ ոչ մեկնեցիս այդպիսի յամառութենէ, գոչեմք առ Աստուած օրհասելով. Տէր ի քաղաքի քուժ զպատկերս քո արհամարհեա, զի բարձցի ի միջոյ մերմէ որ զայդպիսիդ յանդգնեցաւ գործել:

Արդ եղիցի քեզ դառնալ յառաջին հաւատն, և յայդմանէ փախչել, և լաւագունին հանդիպիլ, և որոշողութեանդ լուծումն առնուլ, և Քրիստոսի հաղորդութեան արժանաւոր լինել, և մերոյ մխիթարութեանս ընդունող. քանզի ոչ կամի Աստուած զմահ մեղաւորին որպէս զդառնալ նորա ի չար ճանապարհէն և կեալ:

Ն. ԵՊՍ. ԵՈՎԱԿԱՆ



(8) է, Չուլի Ե:

(9) տարաբերի, Ե:

(10) Ապա երբ հաւանեցիս, Ե:

(11) և, Չուլի Ե:

(12) մեք, Ե:

(13) քո զվճիռ, Չուլի Ե:

(14) հաստատեալն ոչ, Ե:

(15) Ասկէ անդին կը պակսի ապագրեալին մէջ, ձեռագրէն թերթ ինկած ըլլալով, ինչպէս կը յայտնէ լուսանցքի ծանօթութիւնը:

(16) զհաւատ, ԱԲԳԴ:

(17) մատնեցեր զնա և ոչ Յուդայի, Գ:

ԻՄԵՍՏԵՍԻՐԱԿԱՆ

ԿՐՕՆՔ ԵՒ ԳԻՏՈՒԹԻՒՆ

Երևոյթներու դիմաց մարդկութիւնը կը հարցնէ «ի՞նչ», «ի՞նչո՞ւ», «ի՞նչպէ՞ս» և ուրիշ կարգ մը հարցումներ, որոնց կը փորձէ պատասխանել՝ զգայարաններու և իմացականութեան ճամբով։ Մասնաւոր ժամանակաշրջանի և միջավայրի մը սահմանումներուն ենթակայ են որեւէ երևոյթի տանջութեամբ որեւէ հարցումի գոհացնող պատասխանները։ «Ինչպէ՞ս»-ով որակուած հարցումներ ընդհանրապէս իրենց պատասխանները կը փնտռեն գիտութեան — բնական, կենսաբանական, ընկերային — ճամբով։ «Ինչո՞ւ»-ներու պատասխանը կու գայ կրօնքով և աստուածաբանութեան միջոցաւ։ Զանազան երևոյթներ սահմանող, բացատրող և վերլուծող պատասխաններ ու եզրակացութիւններ բացարձակ և վերջնական արժէք չեն ներկայացներ անհրաժեշտաբար։ Կ'ընդունինք կամ կը մերժենք՝ զանոնք արժեւորելէ վերջ և ժամանակի ընթացքին մարդկութիւնը կը բարեկշիւէ, կը բարեկաւէ՛ զանոնք ու դարձեալ կ'արժեւորէ։ Կրօնք և գիտութիւն մրցակից, հակասական և ընդհարումներու ենթակայ երկու միջոցներ կը նկատուին՝ ճշմարտութիւն գտնելու, գիտնալու, հասկնալու և բացատրելու մէջ։ Աստուծոյ գոյութիւնն ու բնոյթը, Տիեզերքի սկիզբը, բնոյթը և վախճանը, կենդանիաշխարհին գոյութիւնը և կեանքի սկիզբն ու բնոյթը, մարդուն անձնաւորութեան ու բանականութեան բնոյթը, մարդկային ընկերութիւններու արժէքներն ու մշակոյթները մարդկային միտքը զբաղեցնող երևոյթներ ու հարցեր են։

Վերոյիշեալ երևոյթներու փոխ-յարաբերութիւնները առարկայ են մարդու հետաքրքրութեան, գտնելու մղումին, ճշգրիտ գիտարկութիւններու միջոցաւ տրամաբանական եզրակացութիւններու հասնելու հակումին։

ԳԻՏՈՒԹԻՒՆ

Անկենդան և կենդանի աշխարհի մասին ծանօթութեանց զանգուածն է գիտութիւնը։ Ուսողութիւնը գիտութեան հիմքը նկատուի։ Բնագիտութիւն, աստղաբանութիւն, աստղաբաշխութիւն և երկրաբանութիւն իրենց նւթ ունին անկենդան աշխարհը, մինչ բուսաբանութիւն, կենդանաբանութիւն, հոգեբանութիւն և ընկերաբանութիւն իրենց ճիւղաւորումներով՝ կ'ուսումնասիրեն կենդանի աշխարհը։ Գիտութիւն յղացքը սակայն կ'ընդգրկէ նաեւ ճշմարտութեան ի խնդիր գիտնականի կեցուածք և գիտական մեթոտ։ «Գիտութիւն» եզրը իր կարելի արդար սահմանումը կրնայ ունենալ գիտական մեթոտի տեսակէտէ գիտուած։ Գիտական խուզարկութիւն մը կը սկսի առեղծուածային հարցով մը։ Ստեղծագործ մտածողութեան և հանճարի ճամբով միայն կարելի է հարց մը նշմարել։ Գիտնականը հարց մը բանաձևելէ ետք այդ հարցը բացատրող տեսութիւն մը կ'առաջադրէ։ Տեսութեան մը յօրինումն ալ ստեղծագործ արարք մըն է, իմացականութեանէն յառաջ եկող։ Տեսութիւն մը հարցի մը լուծումը չէ՛ տնայարարի ենթարկելի ըլլալ քննութեան, որմէ ետք միայն առեալ տեսութեան ճշգրտութիւնը կամ ճշգրիտ չըլլալը հետաւոր կը դառնայ փաստել։

Լա տեսութիւն մը ընդհանրապէս նոր հարցերու ծագման շարժառիթ կ'ըլլայ։ Տեսութեան մը կը յաջորդէ տրամաբանական պարզում, իբր միջոց մակածական մեթոտը ունենալով։ Անհրաժեշտ է տեսութիւնը ենթարկել փորձառական քննութեան, զայն ճիշտութեանց դատաստանին բերելու համար։

Տեսութիւն մը կը սահմանաւորէ փորձառական կերպը և փորձարկութիւնը քննութեան կ'ենթարկէ այդ տեսութիւնը։ Փորձարկութեան մը դրական արդիւնքները կը ստուգեն և ոչ թէ կը փաստեն քննութեան ենթարկուող տեսութիւնը, մինչ ժխտական արդիւնքները կը հերքեն զայն։ Այսպէս, տեսութիւններ կ'առաջնորդեն փորձառական քննութեանց, և փոխադարձաբար։ Ըստ գիտնականներու,

իրը մեթոս՝ «գիտութիւնը ամենէն կարեւոր և ստեղծագործ շարժումն է մարդկութեան պատմութեան մէջ»^(*)։ Իբր ծանօթութեան զանգուած՝ գիտութիւնը կը թափանցէ ստեղծագործութեան օրէնքներէն ներս, կը նկարագրէ և կը բացատրէ երեւոյթներ, Գիտութեան միջոցաւ կարելի կ'ըլլայ երեւոյթներու արդիւնքները նախատեսել, կանխել վտանգներ, իշխել միջավայրին — կենդանի և անկենդան — և զսպել անձը։ Գիտութիւնը ինքնին արժէքներով չ'զբաղիր, սակայն գիտական գործունէութիւնը անթակայ է արժէքներու։

ԿՐՕՆԻՔ

Կրօնք բառին ստուգաբանութիւնը մութ է։

«Կարգ մը մարդիկ կիկերոսէն սկսեալ, [կրօնք] բառը կ'ուզեն կապակցել լատիններէն «religere»-ի, որուն հակադրութիւնն է «negligere»-ը, և այսպէս բառին իմաստը կը սահմանեն իբր չըջանալից հագողութիւն, երկիւղած յարգանք, հակադրուած՝ անտարբերութեան և անհոգութեան։ Աւելի նոր տեսակէտ մը [կրօնք] բառը կը կապէ լատիններէն «religare»-ի, որ կը նշանակէ արգելք, կաշկանդում։ Նման ստացումով կրօնք կը նշանակէ բացարձակ արգելք (taboo) կամ արգելադրում։ Հակադրական իմաստը կը պարունակէ «արգիլուածի, անտակիի, անհպելիի և անմտածելիի գաղափարը»^(*)։

Կրօնք եզրին երկարժէն բնոյթը մասնաձև է William James-ի «The Varieties of Religious Experience» գրքին մէջ հետեւեալ բառերով։ «Աստուած իրապէս գոյութիւն ունի՞։ Ինչպէ՞ս գոյութիւն ունի։ Ի՞նչ է Ան։ [Աստիք] չափ մը անտեղի հարցումներ են։ Ոչ թէ Աստուած, այլ կեանք, աւելի կեանք, աւելի մեծ, աւելի հարուստ, աւելի գոհացուցիչ կեանք նպատակն է կրօնքին»։ Ուրիշ տեղ մը կը շարունակէ։ «Տարբեր կրօնքներու իրարու դէմ մտրանշող առաւելումները և բանա-

ձեւերը իրականութեան մէջ զիրար կը չէզոքացնեն, բայց սրու միակերպ արտայայտութիւն մը կայ, որուն մէջ ամէն կրօնք կը թափ միանալ։ Երկու մասէ կը բաղկանայ այդ. խռովք մը, և այդ խռովքին լուծումը։ Լուծումը սխալէն ազատած ըլլալու զգացումն է, փրկութիւնը այն զգայնութիւնէն՝ թէ մեր շուրջը սխալ բան մը առկայ է»։ Ըստ Ֆրէյդի, կրօնական գաղափարներ «ծնած են մարդուն և մարդկային ցեղին անօգնական մտնկութիւնը տանելի դարձնելու կարիքէ մը»։

«Կրօնքը տեսիլքն է բանի մը՝ որ անդին է, ետեւ և մէջը անմիջական իրերու առժամեայ հոսանքին։ Իրական բան մը, որ կը սպասէ իրականանալու։ Տեւաւոր կարելիութիւն մը և սակայն ներկայ իրողութեանց մեծագոյնը։ Բան մը որ իմաստ կու տայ բոլոր անցնող բաներու և որ կը խուսափի ըմբռնումէ։ Բան մը որուն տիրացումը վերջնական բարին է և և որ սակայն հասողութիւնէ անդին կը գտնուի։ Բան մը որ բարձրագոյն իտէալն ու միաժամանակ անյոյս փնտառութիւնն է»^(*)։

Ըստ Ուրիշ մտածողի մը, «գաւառութիւնէ և գաղափարախօսութիւնէ աւելի բան մըն է կրօնքը և կարելի չէ գոյն իրական կեանքէն անջատ ըմբռնել։ Ան երեւան կու գայ այնպիսի պահերու՝ երբ մարդու հոգին ցնցուած է բոլոր նշանակութիւններու իմաստին և իր գոյութեան իսկ հետ ամբողջարկուած գերագոյն յանձնառութեան մասին կատարեալ մասնագութեամբ մը։ պահերու՝ երբ նախընթաց ամէն եզրակացութիւններ, կեանքը խեղդող ամէն մանրութիւնը կ'առկախուին և հոգին յաւիտեական ճշմարտութեան նշանի մը կը ծարաւի։ պահերու՝ երբ հոգին կ'ընդունարէ անթանգելիօրէն յանկարծական վաղանցիկօրէն յարատեին հետ»։

Դատողական իմաստափոխութեան համաձայն, կրօնքի բնոյթը կարելի է հասկընալ՝ սահմանելով կրօնքին դերը։ Կրօնքը անհրաժեշտ է հասկնալ ու գտնել՝ որպէս

(*) Harold A. Basilius, «Religion and Theology in a Theory of the Cultural Sciences» in Contemporary Problems in Religion, H. A. Basilius, ed. Detroit, Wayne Univ. Press, 1956, p. 99 - 100.

(*) Alfred N. Whitehead, «Science and the Modern World». New York, The New American Library, 1925, p. 191.

չափանիշ ունենալով մարդկային կեանքին վրայ անոր ձգած ազդեցութիւնը: Պէտք է քննել կրօնքին աղերսը մարդուն իմացականութեան և «իմացականութենէն անդին» հաւատքի, զգացումի, ենթագիտակցութեան, բնագոյի ու կամքի հետ» (*):

Կրօնքի կեդրոնական և յատկանշական գաղափարը Աստուծոյ ըմբռնումն է: Դարերու մէջէն այս ըմբռնումը ենթակայ եղած է եղափոխութեան և յանգած՝ հագեցած իմաստաւածութեան գաղափարին: Աստուծոյ ըմբռնումին բարեշնչումը ունեցած է երեք կարեւոր փուլեր, որոնց մէջ Աստուած յարաբերուած է բնութեան, ընկերութեան և բարոյականի գաղափարներուն հետ:

Կրօնքի բազմաթիւ սահմանումները կը ներկայացնեն կրօնքը իբր զաւանութիւն և վարդապետութիւն, իբր հաւատք կամ անհատական փորձառութիւն և իբր վարք կամ ապրելակերպ:

Կրօնական և աստուածաբանական բանաձևերու արժեւորման մեթոտները և չափանիշերը հետեւեալներն են. — (**):

1) Հեղինակութիւն. — Կրօնական բանաձևեր կրնանք ընդունիլ երբ անոնք կը համակերպին հեղինակութեան մը, օրինակ Աստուածաշունչը, եկեղեցւոյ մը առաջնորդները: Այս մեթոտին մաս կը կազմէ մարդուն կեցածքը հեղինակութեան հանդէպ: Ոմանց համար հեղինակութիւնը բացարձակ արժէք ունի, իսկ ուրիշներ հարցաքննելէ վերջ միայն կ'ընդունին կամ կը մերժեն բանաձև մը:

2) Մասնատրիւն. — Ըստ որուն տրւել և բանաձևեր փորձառութեան մը փորձաքարին կ'ենթարկուին: Կրօնական մտատեսութեան օրինակ մըն է միսթիքականութիւնը: Միսթիքը իր անմիջական ներհայեցողութիւնը և կրօնական բանաձևեր իրարու հետ կը բաղդատէ:

3) Բանապատեւրիւն. — Այս մեթոտին համաձայն բանաձևերու շարք մը կ'ենթարկուի յարակցութեան փորձաքարին,

պարզելու համար հակասութեանց բացակայութիւնը և միեւնոյն ատեն առեղծիքաբանաձևերու այդ շարքին մէջ իմաստ յարաբերութեան գոյութիւնը: Ըստ Hutchisonի, յարակցութեան փորձը ինքնին անբաւարար մեթոտ մըն է կրօնական բանաձևեր արժեւորելու:

4) Փորձառական Մեթոտ. — Առաջադրութիւններու և զգայական տուեալներու միջև համադասութիւն մը կը փնտռէ: Այս մեթոտի պարագային, տուեալներու զգայական բնոյթին անհրաժեշտութիւնը լուրջ հարց մըն է կրօնա-իմաստասիրական տեսակէտէ:

5) Գոյապատեւրական Մեթոտ. — Առաջադրութիւններ քննելու կերպ մըն է, որ չափանիշ ունի «գործօն» փորձառութեամբ մարդուն» հանդիպած իրողութեանց և այդ առաջադրութիւններուն համադասութիւնը: Իբր մեթոտ կը պարունակէ բանապատեւրական յարակցութեան փորձը, ինչպէս նաև փորձառական մեթոտի զգայական տուեալները: սակայն ան կ'ընդգրկէ մարդուն ամբողջ նստի և աշխարհի միջև առկայ բաղադրումն ու փորձառութիւնը:

ԿՐՈՆՔԻ ՆԻ ԳԻՏՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՐ

Պատմական (*)

Նախնական մարդը արդի իմաստով ոչ կրօնք և ոչ գիտութիւն ունէր, սակայն կ'ըսուի թէ տէրն էր կրօնական սովորութիւններու և համոզումներու: Հին Արեւելքի մէջ կային կրօնական դրութիւններ, որոնք կը բացատրէին Մարդը և Աշխարհը, այս երկուքին փոխ-յարաբերութիւնը, մարդուն ծագումը և ճակատագիրը: Այդ դրութիւնները կը պարունակէին թէ՛ կրօնք և թէ՛ գիտութիւն, սակայն կրօնքի և գիտութեան զատորոշումը անկարելի է:

Ն. Ք. 6րդ դարու Այոնեան Յոյներն էին գիտական ըմբռնումը յղացող (այսպէս սկզբնաւորելով գիտականին՝ կրօնականին զատորոշումը): Առաջին երկը որուն մէջ կրօնական և գիտական տեսակէտները յատկաօրէն զատորոշուած են՝

(*) William E. Hoeking, «The Meaning of God in Human Experiences». New Haven, Yale Univ. Press, 1912, p. 3.

(**) John A. Hutchison, «Faith, Reason and Existences». New York, Oxford Univ. Press, 1956, p. 30-32.

(*) Joseph Needham, Ed. «Science, Religion and Reality». London, The Sheldon Press, 1925.

Մեծն Հիբոֆորթի աշխատանքին արգելին քն է, Սուրբ Հիւանդութեան (արգի իմաստով լուսնոտութեան) մասին գրուած Ն. Ք. 400 տկան թուականներուն:

4րդ դարու Յոյն իմաստասէրներ տիկզորքի առնչութեամբ կարգ մը տեսութիւններ առաջադրեցին: Ըստ Արիստոտէլի, մեծագոյնը 4րդ դարու այս խումբի փիլիսոփաներուն, նիւթը չէր ստեղծուած չին երրորդական իմաստով: Այդ շրջանի կրօնական համոզումներուն դէմ էր առաջադրել թէ նիւթը անստեղծելի և անխորտակելի է:

«Յոյն ժողովրդական կրօնքը յարաբերաբար նախնական վիճակի մը մէջ ըլլալով, քուրմերու և իմաստասէրներու միջև քիչ անգամ յարաբերութիւն կար. իւրաքանչիւրը կը յառաջանար միւսէն անկախ: Դարուն իմաստասիրութիւնը իր մէջ ունէր կրօնական որոշ ակնարկութիւններ, և կը գոհացնէր փիլիսոփայութեան ուսանողներու կրօնական ձգտումները: Այսպէս, թէև հեթանոս աշխարհին մէջ կրօնքի և գիտութեան միջև բացայայտ ընդհարում չկար, այսուամենայնիւ ժողովրդական կրօնքը շարունակեց յարատեւօրէն ականահարսել իրապաշտ իմաստասիրութեան կողմէ:» (*)

Ն. Ք. 60 տկան թուականներուն, խորհողներ կը արամբարանէին որ եթէ նիւթը անստեղծելի և անքանդելի է, ապա ուրիմն ամէն բան կը գործէ «յաւիտենական նիւթին մէջ գոյութիւն ունեցող կանոններով»: Անոնք հարց կու տային. «Ի՞նչ կը մնայ մարդուն»: Այս հարցումին Ստոյկեանները և եպիկուրեանները իրենց տարբեր պատասխանները գտան, որոնք այդ շրջանի «գիտական հաւաքաբերութեան թուլացումին» արտայայտութիւնները կը նկատուին:

«Գիտութիւնը՝ յառաջ բերած էր երկաթեայ, անջիղ, բռնակալ տիկզորք մը, որուն մէջ մարդ ինքզինք կաշկանդուած, բանտարկուած, նուաճուած կը զգար:

«Գիտութիւնը առաջնորդած էր զէպի

էական ա՛յն յոռեանսութիւնը, որ կը մթապնէ հետադաշ շրջաններու մտածողութիւնը: Այս յոռեանսութեան դէմ հակադրեցութիւնն էր որ մղեց հազեկան մեծ փոփոխութեանց, որոնց ընթացքին չին աշխարհը կործանեցաւ և ապաստան գտաւ Քրիստոսնէութեան մէջ:» (*)

150-200 Յ. Ք. Կալէն, իր «Մարդկային Մարմնի Մասերուն Գործածութեան Ծուրջ» երկին մէջ, մարդկային մարմնի գործարաններուն կազմութեան և անոնց պաշտօններու յարաբերութեան մէջ կատարելութիւն մը կը գտնէ ու Աստուծոյ գոյութիւնը կը հետեցնէ իւրաքանչիւր գործարանին՝ մասնաւոր գերի մը համար մտադրուած ըլլալու իր համոզումէն: Ասիկա հաճոյ թուեցաւ Քրիստոսնէական տեսակէտին: Կալէնի մասէն հաջորդական շարքի տարիներու անգործութեան մը դատապարտուեցաւ:

Ժամանակի ընթացքին Արիստոտէլեան մտածողութեան տարրեր երեւան եկան և տիրական դարձան 13րդ դարու երկերուն մէջ, որոնց մեծագոյնը Թ. Ագուինացիի «Բովանդակութիւն Աստուածաբանութեան» գիրքն է:

«Ամբողջութեան մէջ առնուած, Քրիստոսնէութիւն առաւել Արիստոտէլականութիւն աւելի՛ շատ բան կը բացատրեն քան այս երկուքէն որեւէ մէկը: Այսուհանդերձ, Արիստոտէլեան իմաստասիրութեան մէջ տուած շատ մը խռովեցուցիչ տարրեր պիտի առաջնորդած ըլլային բացայայտ ընդհարման: Այսպէս էր օրինակ, Արիստոտէլեան հիմնական տեսակէտը նիւթին անքանդելիութեան և անստեղծելիութեան մասին, այն հետեւութեամբ՝ թէ նոյնինքն տիկզորքը անստեղծ է և ան-ժամանակ:

«Եթէ Արիստոտէլի բառերուն բուն իմաստը դէմ յանդիման բերուած ըլլար Աստուծոյ աշուհի խօսքերուն, արդիւնքը կրած պիտի ըլլար շատ լուրջ ընդհարում մը: Սակայն իրականութեան մէջ այս հակադրութիւնը զգուար թէ կարելի ըլլար ընել, Արիստոտէլի թարգմանութիւնները և մեկնութիւնները ուղղակի Յունարէնէն չէին, այլ՝ Արաբ կամ Երբա-

(*) Charles Singer, «Historical Relations in Religion and Science», in J. Needham Ed. Science, Religion and Reality, p. 103.

(*) Անդ, էջ 106:

յեցի մեկնաբաններու միջնորդութեամբ
հկած»։ (*)

Արիստոտէլի մեկնաբաններէն ոմանք
աշխարհի յաւիտեանութիւնը հաստատեցին,
իսկ ուրիշներ՝ աշխարհի ստեղծուած ըլ-
լալը։ Արիստոտէլի վարդապետութեան
մեկնաբաններուն բանավեճը կրօնական
և գիտական տեսակէտներու ընդհարումի
արդիւնքը կը թուի ըլլալ։ Սակայն Երա-
նավէճը տարբեր կարծիքներու բաղխու-
մէն յառաջացած է։

13րդ և 16րդ դարերու միջև երկարող
չրջանին, Հաւատաքննութիւնը (Inquisi-
tion) և Բարեկարգութիւնը (Reformation)
վտանգաւոր նկատուած գիտական տեսա-
կէտներ արգելադ և խափանող շարժում-
ներ էին։

15րդ դարուն, Նիքոլա Գուզացի կար-
տինալը, ուսողութեան հասեւած հեղեցու-
կան մը, իր երկերուն մէջ կը յանդի այն
եզրակացութեան՝ թէ փորձառութեան եր-
կու կերպեր գոյութիւն ունին։ «Արտա-
քին փորձառութիւն մը, ենթակայ՝ բնա-
կան օրէնքներու, որուն շուրջ կրնանք
դատողութիւններ ընել, և ներքին փոր-
ձառութիւն մը, որ ոչ մէկ կապակցու-
թիւն ունի նման օրէնքներու հետ և որ
վեր է ու անդին դատողութիւնէն»։

Երկու երկեր երեան հկան 1543 ին-
կոպեռնիկոսի լ«On the Revolution of the
Celestial Orbs»ը և Վեղալիոսի «Fabric of
the Human Body»ն, չորսնք Արիստոտէլի
բնագիտական և կալէնի կողմախօսական
տեսութիւնները հարուածեցին։ Եկեղեցին
չընդունեց Կոպեռնիկոսի և Վեղալիոսի
տեսութիւնները, սակայն չտրամեցաւ Ա-
րիստոտէլի և կալէնի վարկին հասած
փնտէն։

17րդ դարը հարուստ է գիտնականնե-
րով և գիտական հնարքներով։ Գիտու-
թեան հանդէպ կրօնքի քննադատական
կեցուածքը իր գաղաթնակէտին հասած է
կալիլէոյի դատաստանով, դատապարտու-
թեամբ և գիտութենէ իր հրաժարումով
(1633)։ (Նոյն թուականին Տէքարթ կը
պատրաստուէր իր առաջին երկի հրատա-
րակութեան՝ երբ լսեց կալիլէոյի դատա-

պարտութեան մասին և յառաձգեց իր
ծրագրին դարձադրութիւնը)։

Կալիլէո իր դատապարտութենէն ետք
ծնրողրեց և «ընդունեց» թէ իր գիտական
կեցուածքն ու գիտերը հերետիկոսու-
թիւններ էին, խոստացաւ ապաշխարիլ և
հրաժարիլ եկեղեցւոյ դաւանանքին ղէմ
նկատուող մամուլներ աւանդել։ Նոյն
չրջանին կը պատկանի Բէլփլըր, մաթեմա-
թիկոս և միսթիք, ըստ որուն գիտու-
թիւնը Արարիչին մեծութեան յայտնու-
թիւնը եղող դարձանէութիւն մըն է։ Իր
առաջադիտական երկերէն մէկը կը վեր-
ջանայ ազօթքով մը, որուն յատկանշական
տողերէն են. «Տես, տհաւասիկ հոս աւար-
տած եմ իմ կոշումիս վերաբերող երկ մը,
օգնութեամբը այնքան իմացական կարո-
ղութեան՝ որքան որ դուն շնորհած ես
ինծի»։

Վերածնունդէն մինչև 18րդ դար, հա-
ւատքը բանարկելով կրօնքի և գիտու-
թեան ընդհարումը լուծելու ջանք մը
կար։ Անկէ ետք Տորսելինի հղափախու-
թեան տեսութիւնը, հոգեբանութեան և
կազմախօսութեան յարաբերութիւնը, ու-
սողութեան նոր դրութիւններ, բնագի-
տութեան և տարրաբանութեան ճամբով
հկած նորութիւններ անկենդան և կեն-
դանի աշխարհի մասին նոր տեսութիւն-
ներ և տարակարծութիւններ մէջտեղ բե-
րին։

Ն. ԵԱՂԷԱՆ

(Ճարտնակի՝ 1)




(*) Անդ, էջ 115։

ՊԵՏՄԱԿԱՆ

ՈՒՓԱՆԱՆՅՑ ՏՈՂԻՄԱՅՈՒՑԱԿԸ

Մեծ. Կարս Ղափաղարեանի Հաղրատի վանքին նուիրուած արժէքաւոր ուսումնասիրութեան մէջ կը տեսնենք նաեւ Ուփանանց տոհմի մէկ ցուցակը, ուր զետեղուած են տասներեք անձեր եօթ սե-

րունդի վրայ, որ ճիշդ չթուեցաւ մեզի: Մեր հաշուով խնդրոյ առարկայ տասներեք անձերը կը վերաբերին հինգ սերունդի միայն, այսպէս,



Նախ լաւ է որ տեսնենք Ուփանանց տոհմին վերաբերող յիշատակութիւններուն կարեւորները, որոնք են՝ մէկ տապանագիրը և հորս արձանագրութիւնը, և ապա միտումի նկատի առնենք վերոյիշեալ անձերը:

1. — Սմբատ արդի Ուփանա (ԺԲ. Դար): — Հաղրատ, էջ 186, տապանագիր իԱ:

2. — Ի ՈՒՐ [= 1189], ի յառաջնորդութեան տեառն Բարսղի հաւրեղբաւր իմո, ևս Դուրիթ, արդի Վասակա միտքունեցա սրբոցս և շինեցի զխորանս և զեկեղեցիս ի վերա հանգստարանի հաւր իմո և քվեր Բուրդոխանա: Արդ, ազաչեմ սուրբ եղբայրութիւնդ, որ զաղուհացից զշարաթն և զկիւրակին . . . իմ մաւրն Վանենէ, դատեր Կիւրիկէի թագաւորի, և իմ քվերն Բուրդոխանա, իմ հաւրն առնեն, և յետ իմ՝ ինձ և իմ քվերն տանեն. — Հաղրատ, էջ 174-5, արձ. 43:

3. — Անուամբն Աստուծոյ, ևս Նաջմադինս, արդի Սմբատա, թոռն Ուփանա, և արդի իմ Սմբատ և Վահրամ յուսացաք թ սուրբ Նշանն Հաղրատա և եղաք ի տեղ-

ւաջ տստ զգերեզմանս մեր և զոր թագաւորաց թագաւորքն Գէորգի և դուստրն իւր թամար վառն մեր շատ ծառայութեան զՄորի սիգեւով մեզ էին տուեալ անդ Զաքեոնք շինական և զԿեչենուտին այգին տ(ուինք) վասն Զաքարիաի, Շահնշահի և Իւանէի արեւշատութեան և մեզ մեղաց թողութեան: . . . Թուին Ոկ [= 1211]: — Հաղրատ, էջ 230-231, արձ. 130:

4. — Ի թուին Հայոց Ոկթ [= 1220], ի յառաջնորդութեան տեառն Յոհանիսի սուրբ աւխտիս Հաղրատա, ևս Քուրդս, արդի Սմբատա, եղբայր տեառն Բարսղի, շինեցի զեկեղեցիս և զպարիսպս ի վերա հանգստարանի իմո վասն փրկութեան հոգս իմո և ոչ ժամանեցի կատարել, զի կոչեաց զիս տէր: Եւ մեք, Սմբատ և Ուփան, արդիք նսրա, կանգնեցաք զխաչս և աւրհնեցաք զեկեղեցիս. — Հաղրատ, էջ 129-130, արձ. 128:

5. — Ի թվին ՈՂԲ [= 1243], շնորհիւն Աստուծոյ, ևս Դուրիթ եկի ի սուրբ Նշանիս առաջի ու զինչ իմ պապն Քուրդն, Ուփանայ (տպ. Ուփանաց) թոռն, ու իմ

հայրն՝ Ուքան սուրբ Նշանիս միաբանութիւն էին տուել հաստատեցի. զսուրբ Սարգսին մուտքն, զկաթանացն այգին մեղրով և Գ շինական, ձիթատու, աւետարան և այլ սպասք եկեղեցոյ — Հաղթատ, էջ 206-7, արձ. 79:

Այժմ տեսնենք վերոյիշեալ անձերը թիւի կարգով:

1. — Ուֆան, հայր Սմբատայ (1, 3, 5):
2. — Սմբատ, որդի Ուքանայ և հայր Վասակայ, Բարսղի, Քրդի և Նաջմադինի (1, 3, 4):

3. — Վասակ (+ 1189 էն առաջ), որդի Սմբատայ, ամուսին Կիւրիկէ արքայի դուստր Վանենիի (+ 1189 էն առաջ), հայր Բուրդոխանայ և Դաւթի (2):

4. — Բարսեղ Արք. Հաղթասայ (1180-1189), որդի Սմբատայ (Հաղթատ, էջ 143 և 157, վերը թիւ 2 և 4):

5. — Բուրդ (+ 1220), որդի Սմբատայ, և հայր Սմբատայ և Ուքանայ (4, 5):

6. — Նաջմադին (1211), որդի Սմբատայ, հայր Սմբատայ և Վահրամայ (3):

7. — Բուրդոխան (+ 1189 էն առաջ), դուստր Վասակայ և Վանենու (2):

8. — Դաւիթ (1189), որդի Վասակայ և Վանենու (2):

9. — Սմբատ (1220), որդի Քրդի (4), իր անունը կը պակսի անձնանուններու ցանկին մէջ:

10. — Ուֆան (1220), որդի Քրդի, հայր Դաւթի (4, 5):

11. — Սմբատ (1211), որդի Նաջմադինի (3):

12. — Վահրամ (1211), որդի Նաջմադինի (3):

13. — Դաւիթ (1243), որդի Ուքանայ (5):

Ծանօթ արձանագրութեանց տուեալներուն համաձայն ուրեմն այսպէս կը ներկայանայ մեզի Ուքանանց տոհմացուցակը:

Ն. ԵՊՍ. ԾՈՒՎԱԿԱՆ

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

«ՆԵՐՍԷՍ ԾՆՈՐՀԱԼԻ» - Հեղինակ՝ Գր. Յակոբեան. Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիայի Հրատարակութիւն, Երեւան, 1964.

Հայաստանեայց Եկեղեցիի մեծագոյն գէմքերէն մին հանդիսացող Ս. Ներսէս Ծնորհալիի կեանքն ու զրական ստեղծագործութիւնը ճակատագրի տարօրինակ կարգադրութեամբ մը դարեր շարունակ ոչ ուսումնասիրուած են և ոչ ալ իրենց արժանի գնահատանքը ստացած: 1873-ին Մխիթարեան Հայր Դ. Ալիշան Վենետիկի մէջ կը հրատարակէ իր «Ծնորհալի և Պարագայ իւր» ընդարձակ և արժէքաւոր ուսումնասիրութիւնը, որ սակայն, բլլալով հանդերձ առաջին դիտական աշխատութիւնը Ծնորհալիի կեանքին և գործին, թերի է գնահատան տեսակէտներով: Մանուկ Աբեղեան ալ, իր «Հայոց Հին Գրականութեան Պատմութիւն» մեծածաւալ գրքին Բ. հատորին մէջ ընդարձակ ուսումնասիրութիւն մը (էջ 73-129) ունի նոյն նիւթին շուրջ:

Հետեւաբար, Ծնորհալիի լուսաւոր յիշատակին արդարութիւն ընող զեղեցիկ և լրիւ ուսումնասիրութիւն մըն է Գրիգոր Յակոբեանի «Ներսէս Ծնորհալի» հատորը (298 էջ), տպուած Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիայի Մ. Աբեղեանի Անուան Ինստիտուտին կողմէ, Երեւան: Գրքին մէջ ներկայացուած են Ծնորհալի ժամանակը, կեանքն ու հասարակական գործունէութիւնը, մանրամասնօրէն քննութեան առնուած՝ բաղմարդին եկեղեցականին Թուղթերը և չափածոյ ստեղծագործութիւնները, և, ի վերջոյ, հիմնական գնահատումի է ենթարկուած անոր արուեստը՝ որպէս բանաստեղծական մշակոյթ և ազդեցութիւն:

Որոշ է որ այսպիսի լման և ամէն բան ընդգրկող գիրք մը արդիւնք կրնայ բլլալ միմիայն տքնաջան ուղղատունկերու և ուսումնասիրութիւններու: Հեղինակը օգտագործելով տպագրուած աղբիւրներ և ձեռագիրներ, կրցած է վերակառուցանել Ծնորհալիի անձնատրութիւնը՝ ամենէն յաջող և

արտայայտիչ դիժերով, և արժեւորել անոր ձգած դրական ժառանգութիւնը: Հեղինակին նպատակներէն մին եղած է նաեւ սրբապրել Շնորհալիի անձին և դործին, ինչպէս և ընդհանրապէս Հայ կեանքին հետ կապուած դանադան թիւր կարծիքներ: Այսպէս, օրինակ, իր յառաջարանին մէջ Գր. Յակոբեան կը գրէ. «Հակառակ մինչեւ այժմ եղած կարծիքի, մենք աշխատել ենք հիմնաւորել այն տեսակէտը, որ հայկական շարականները օտարամուտ և հայ իրակաւնութիւնից կտրուած չեն, դրանք հայ մշակոյթի մի իւրայատուկ տեսակն են» (էջ 10): Կամ, քիչ մը աւելի վարը. «Հակառակ ընդունուած կարծիքի, որ Շնորհալին գրել է իբր միայն 120 հանելուկ, մեր կողմից ձեռագրերից քաղուած բազմաթիւ նոր հանելուկներով հաստատուած է, որ Շնորհալու գրչին են պատկանում ոչ միայն 120, այլ մօտ 300 հանելուկ»:

Գրքին առաջին գլուխը, «Ժամանակը» խորագրին տակ ամփոփ կերպով կը ներկայացնէ ԺԲ. դարը, հարիւր տարիներու այն շրջանը՝ որուն ընթացքին Կիլիկիան Թաղաւորութիւնը վերջնականապէս հաստատուեցաւ և երկիրը, շնորհիւ իր աշխարհադրական դիրքին ու քաղաքական բարենպաստ պայմաններու, բարդաւաճեցաւ և տնտեսապէս զօրացաւ: Քաղաքական կեանքի այս կայունացման իբր հետեւանք՝ Կիլիկիոյ մէջ ԺԱ. դարէն իսկ կը սկսին ծաղկիլ բազմաթիւ վանքեր, որոնք շուտով կը դառնան ուսման և մտաւոր կեանքի կեդրոններ. մեր պատմութեան մէջ նշանաւոր են Տարսուսի, Դրազարիկի, Մեծ Քարի, Սեւ Լեւան, Սկեւոյի և այլ վանքերը՝ իրենց դպրոցներով: «Տնտեսապէս ու քաղաքականապէս վերելք ապրող այդ երկրում ծաղկում էր և մշակոյթը, դարդանում էին արուեստի տարբեր ճիւղերը՝ գրականութիւնը, երաժշտութիւնը, նկարչութիւնը, գրչութեան արուեստը և այլն» (էջ 22): Տակաւին, այս դարուն «սկսում է աշխարհականանալ գեղարուեստական ու դիտական գրականութեան լեզուն» (էջ 23): Ի վերջոյ, հարիւր տարիներու այս շրջանին է որ կ'ապրին ու կը ստեղծագործեն, Շնորհալին գատ, Ներսէս Լամբրոնացի, Մատթէոս Ուռհայեցի, Մխիթար Հերացի և Մխիթար Գոչ:

Երկրորդ գլուխը յատկացուած է Շնորհալիի կենսագրութեան: Սերելով Պահլաւանի նշանաւոր տոհմէն, Շնորհալի շուտով կը կորսնցնէ իր հայրը՝ Ապիրատ իշխանը ու կը յանձնուի իր մեծ հօր՝ Գրիգոր Վկայասէր Կաթողիկոսի խնամքին: Այս վերջինը Ներսէսն ու աւագ եղբայրը Գրիգորը կը տանի Կարմիր Վանք: Հեղինակը մանրամասնօրէն կը ներկայացնէ փաստեր, որոնք կ'ապացուցանեն թէ Շնորհալի Կարմիր Վանքի հոշակաւոր դպրոցին նոյնքան հոշակուած ատաջնորդ Ստեփանոս Մանուկ Լպիսկոպոսէն կը ստանայ հիմնական և բազմաճիւղ կրթութիւն: Սակայն ի նպաստ այս տեսակէտին լաւագոյն փաստը նոյնինքն Շնորհալիի գրական ժառանգութիւնն է: «Անկասկած Շնորհալին ունեցել է հարուստ, հիմնաւոր կրթութիւն, այլապէս նա չէր կարող ստեղծագործել բարձրարուեստ ու հարուստ բովանդակութեամբ այնպիսի գործեր, ինչպէս տաղերը, «Յիսուս Որդին», «Եղեսիոյ Ողբը», հանելուկները և միաները: Շնորհալու բազմաթիւ արձակ թղթերն ու շափածոյ գործերը վկայում են, որ նա լաւ ծանօթ է եղել ժամանակի աստուածաբանական, փիլիսոփայական, բնագիտական, ճարտասանական գիտութիւններին և մանաւանդ յունական արուեստին» (էջ 34):

Եկեղեցական երաժշտութիւնը եւս մեծ բան կը պարտի Շնորհալիի: «...Պէտք է ասել որ նա ոչ միայն գրեց բազմաթիւ նոր շարականներ, այլ և դրանք եղանակաւորեց, երգեց և շատ երգողներ պատրաստեց: Կիլիկիայի շատ շրջաններից նա ընդունակ պատանիներին հուաքում էր Հայրապետանոց, ինքն էր դաստանդում շարականները, սովորեցնում եկեղեցու ժամկարգութիւնն ու պատմութիւնը: ...Շնորհալին ամէն կերպ աշխատում էր վերականգնել ժամանակի ընթացքում խափանուած ազգային հոգեւոր երաժշտութեան եղանակները և դրանց ձայնանիշները՝ խաղերը: Իր գրած շարականների հետ նա յօրինում էր նաեւ եղանակը և ինքն էլ աւանդում Հոռոկայի դպրոցում» (էջ 39-40):

Հեղինակը հաւանական կը գտնէ որ Շնորհալի 1120-1135, տասնհինգ տարիներու միջոցին գէպի Արեւելեան Հայաստան երկարատեւ ճամբորդութիւններու ձեռնարկած և

Հայրապետական Աթոռը Անի Հաստատելու նպատակով Անիի իշխող Ապուլ-Սուարի հետ բանակցութիւններ վարած ըլլայ:

Քաղաքական անտպահով կացութեան հետեւանքով Կաթողիկոսարանը Ծովքէն 1150-ին կը փոխադրուի Հոռմկլա ամրոցը. այստեղի վատառողջ կլիման պատճառ կ'ըլլայ որ Ծնորհալի տառապի զանազան հիւանդութիւններով և վախճանի 1173-ին, 71 տարեկան հասակին:

Եկեղեցականէն և դրականէն զատ, Ծնորհալի ունեցած է նաեւ Հասարակական բեղուն գործունէութիւն: Ծովքի և Հոռմկլայի մէջ ան եղած է խորհրդականն ու գործակիցը իր եղբօր՝ Գրիգորիս Գ. Կաթողիկոսի: Մանաւանդ Հոռմկլայի մէջ է որ ան ի յայտ կը բերէ դիւանադիտական և վարչական մեծ ընդունակութիւններ: Հասարակական երկարամեայ իր գործունէութեան ընթացքին Ծնորհալիի գլխաւոր նպատակը եղած է, ինչպէս հեղինակը կը վկայէ, կրօնական ու ազգային անկախութիւն հաստատել ու պահել: Սակայն դժբախտաբար իր այս ուղղութենէն իսկ ծագած է տարաբանական գլխաւոր թիրախացութիւն մը, ըստ որուն՝ պատմարաններ Ծնորհալիի և ընդհանրապէս Պահլաւունիներու վերադրած են յունասիրութիւն ու ազգային շահերը բիւզանդականին ստորադասելու միտում: Այս ցաւալի թիրախացութեան պատճառ տուողը այն սխալ կարծիքն է, թէ Ծնորհալի եղած է Յոյն և Հայ եկեղեցիներու միութեան խնդիրը արծարծողը:

Բարեբախտաբար Ծնորհալիի Թուղթերը ամբողջութեամբ կը հերքեն այս թիր վարկածը: 1165-էն սկսեալ (այսինքն Ծնորհալիի կաթողիկոսանալէն տարի մը առաջ), Բիւզանդիոնի Կիւ Մանուէլ Կայսեր կողմէ փորձեր կ'ըլլան եկեղեցիներու միութիւնը հաստատելու, և այս ուղղութեամբ զանազան նամակներ ու թուղթեր կը փոխանակուին Կայսեր, Ծնորհալիի և Պոյոյ Յունաց Պատրիարքին միջեւ: «Գիր Հաւատոյ», «Մահմանք Հաւատոյ Հայաստանեայց Եկեղեցւոյ» և «Յաղապս Աւանդութեանց Եկեղեցւոյ» Թուղթերը, ինչպէս նաեւ Կայսեր ուղղուած նամակները յստակօրէն երեւան կը բերեն Ծնորհալիի կեցուածքը Բիւզանդացիներու կողմէ զանազան նպատակներով յարուցուած

եկեղեցիներու միութեան խնդրին շուրջ: Պարզ ու սրտէ է իր դիրքը. «ոչ մէկ անտեղի ու փնտարեր զիջողութիւն, և հաւատարմեան տարրական իրաւունք: Ահաւասիկ թէ ինչ կը զրէ Կայսրին. «Մի եղիցի որպէս տեսնու առ ծառայս և ծառայից առ տեսաք. զի դուք զմերն պակասութիւն զնէք մեր առջի, և մեք ոչ համարձակեմք ի ձերոց ինչ՝ յարոց զայթակղիմք, ծանուցանել ձեզ. և այս մարմնաւորաց է օրէն և ոչ հոգեւորաց, զի թէպէտ և ի նիւթականացս զարծրագոյնն ունիք ամենայնիւ... այլ աննիւթական շնորհաւն մի են հաւատացեալք ի Բրիտանոս՝ մեծամեծք և փոքունք...» («Թուղթ Ընդհանրական», Պոյոս, 1825, էջ 117-118):

Ծնորհալիի Թուղթերուն առաջինն է «Ատենարանութիւն» ճառը, զոր դրած է 1166 Ապրիլի 17-ին, իր Կաթողիկոս ընտրութեան առթիւ: Իսկ ամենէն հռչակաւորը կը հանդիսանայ «Ընդհանրական Թուղթ»ը, իր առաջին կոնդակ-չրջաբերականը, ուղղուած Հայ կրօնականներուն և Հայ ժողովուրդի բոլոր խաւերուն: Թուղթերուն մաս կը կազմեն դաւանաբանական դրուածքներն ու նամակները, ինչպէս նաեւ զրուածքներ՝ Կիլիկիոյ և Հայաստանի զանազան մասերուն մէջ երեւցած ազանդներուն շուրջ:

Սակայն Ն. Ծնորհալիի հօր տաղանդը երեւան կու գայ մասնաւորաբար իր չափածոյ գործերուն մէջ, զորս հեղինակը բաժնած է հինգ անջատ խումբերու. —

1. Ծարականներ, տաղեր, գանձեր:
2. Աշխարհիկ մոտիւններով դաւանաբանական պոէմներ:
3. Մանկավարժական ոտանաւորներ:
4. Պատմա-քաղաքական պոէմներ:
5. Հանելուկներ:

Հեղինակը շատ ճշգրիտ կերպով կ'ըսէ թէ «անկարելի է պատկերացնել մեր շարականների գանձարանը՝ Ծարականոցը առանց Ծնորհալու» (էջ 95): Ըստ իրեն, Ծնորհալի «են մերադրում «Աղուհացից» կոչուող Կիրակիների (մեծ պահոց), «Հայրապետաց», «Հրեշտակապետաց», «Յովհաննէս Մկրտչի Ծննդեան» կանոնները, «Աւագ օրհնութեան» երրորդ ձայնը, «Վարդավառի» երկու և «Վերափոխման» երկու պատկերները. «Վար-

դանոնաց և Ղեւոնդեանց», «Անտոն Անապատականի», «Թէոդոսի կամ Թադաւորաց», «Յակոբ Մծբնացուն», «Յովնան Մարգարէի», «Ս. Սարգսի», «Արծաթսիրութեամբ մոլորեալ», «Նահապետին Արարհամու», «Նարդոզ տիեզերաց», «Նորաստեղծեալ», «Նայեաց սիրով», «Ի քէն հայցեմք», «Արարիչ և մարդասէր», «Առաւօտ լուսոյ», «Աշխարհ ամենայն», «Յիշեսցուք», «Զարթիք», «Քառասուն մանկանց», «Որդոցն Որոտման», «Պետրոսի և Պօղոսի», «Աւագ շարաթի» երեք օրերի, «Հոգեգալստեան» երկու օրերի և «Արեւազալ»ի շարականները, «Այսօր անձառ», «Արարչական» և «Աստուած անեղ» պոէմները: Իսկ եթէ «Կանոն» և «Պատկեր» կոչուող շարականների շարքը առանձին առանձին թուենք, այն ժամանակ Շնորհալու գրած շարականների քանակը կը հասնի հարիւրների» (էջ 98):

Շարականներու ծագման և զարգացման մասին հետաքրքրական տեղեկութիւններէ ետք, Գր. Յակոբեան Շնորհալիի ստեղծած շարականներու խումբը բաժնետէ վեց մասերու:

- Ա. Տէրունական տօներին և առանձին անհատների նուիրուած:
- Բ. Վկայարանական և դաւանարանական:
- Գ. Կանոններից դուրս:
- Դ. Ազգային, աշխարհիկ թեմաներով և
- Ե. Հայրենասիրական շարականներ:
- Զ. Տաղեր և դանձեր:

Այս դասակարգումներուն տակ ինկող շարականներուն, տաղերուն և դանձերուն զլիաւորները վերլուծուած են երբեմն մանրամասնօրէն, և կը վկայեն հեղինակին խոր հմտութեան, կարողութեան և սիրոյն մասին:

Ըստ հեղինակին, Շնորհալիի չափածոյ ստեղծագործութիւններուն երկրորդ դասակարգումին տակ մտնողները, այսինքն «Աշխարհիկ մտտիւներով դաւանարանական պոէմներ»ը գրուած են ու նախատեսուած ոչ թէ եկեղեցիի մէջ երգուելու՝ այլ ընթերցանութեան համար ընդհանրապէս: Ասոնք զօրաւոր դէնքեր դարձած են օտարամուտ ազդեցութիւններու դիմադրելու և անոնց դէմ պայքարելու գործին մէջ: Այս դասակարգումին տակ կը մտնեն «Մաղթանք առ սուրբ Հրեշտական» բանաստեղծութիւնը, «Ներ-

բողեան կենսատու սուրբ խաչին առ ի սրբոյ Հօրէն մերմէ Դաւթէ անյաղթ փիլիսոփայէ, ասացաւ ոտանաւոր չափով աստանօր եղաւ» ներբողը, «Բան հաւատոյ» երկարաչունչ բանաստեղծութիւնը՝ բաղկացած 1500 տողերէ, «Յիսուս Որդի» ընդարձակ և իր պոետիկ-գործոցներէն մին համարուող երկը՝ բաղկացած 4000 տողերէ և «Հաւատով Խոստովանիմ» աղօթքը:

Պահլաւունիներու տոհմէն ուրիշ հռչակաւոր անձի մը՝ Գրիգոր Մաղիսարոսի օրինակին հետեւելով, Շնորհալին եւս իր մտահոգութեան առարկայ դարձուցած է պարզ ժողովուրդի կրթութեան հարցը և այս ուղղութեամբ գրած խրատական-յորդորական երեք բանաստեղծութիւններ, որոնց վերնագիրներն են.

1. «Բան հաւատոյ վասն անեղին և եղելոց բարառնարար ի դիմաց հայկական տառից չափարեմամբ ոգեալ ի ներսէսէ»:
2. «Բան ներտաղական ի խրատ ոգւոց համայնից ի դիմաց մերոյին տառից տանց իւրաքանչիւրսն քառից»:
3. «Խրատ ուսումնականաց մանկանց ի դիմաց այրելւոնից տառից ոտանաւոր տաղիւ չափոյ»:

Այս բանաստեղծութիւններուն նպատակը եղած է տղոց մէջ սէր արթնցնել դիտութեան և ուսումներու, ինչպէս և առաքինի ու պարկեշտ կեանքի հանդէպ: Այս շարքին կը պատկանին նաեւ Սողոմոն իմաստուն արքային նուիրուած եօթ փոքր բանաստեղծութիւններ:

Շնորհալիի առաջին չափածոյ ստեղծագործութիւնը, գրուած 1121-ին՝ երբ հազիւ 20 տարեկան էր, «Վիպասանութիւն»ն է, որ կը համարուի մեր հին դրականութեան առաջին պատմական երկարաչունչ բանաստեղծութիւնը և որ Հայ ժողովուրդի պատմութիւնն է, տրուած բանաստեղծութեամբ: Երկարաչունչ երկ մըն է «Յաղագս երկնից և զարդուց նորա» տիեզերագիտական պոէմը, որ իր նիւթով նորութիւն մըն է այդ շրջանի մեր գրականութեան համար: Հոն կը խօսուի երկնքի, երկրի և երկնային մարմիններու էութեան շուրջ: Գրուած է դիմառնարար և պատմողը երկինքն է:

Սակայն իր ստեղծագործութիւններուն փառքը կը կազմէ «Ողբ Եղեսիոյ» 2096 տող պարունակող քերթումը, որ սրպէս նիւթ ունի Զանգի ամիրայի կողմէ 1144-ին Եղեսիոյ գրաւումն ու կոտորածը: Հոս եւս Ծնորհային գիմած է զիմաստական ձեւին և անձնաւորած Եղեսիան, զայն նմանեցնելով որդեկորոյս մօր մը: Քերթումը մէջ մեծ տեղ ունին նկարագրութիւնները (պաշարումի, բնոյճարումներու, գրաւման և անոր յաջորդող կոտորածներու), որոնք ի յայտ կը բերեն Ծնորհայի վատ երեւակայութիւնն ու զեղարուեստական ճաշակը: Ահաւասիկ փոքր օրինակ մը կոտորածի ահաւոր տեսարանէն.

«Իրբեւ ըզուներս կատաղիս,
Յորսոյ վերայ յարձակէին,
Զարիւնս առեալ զըսպանելոց,
Զանձինս իւրեանց օժանէին.
Եւ գորովայնսն հեքմունիս,
Լեարդսն հանեալ խածատէին.
Եւ ըզզլուխսն քերթէին
Ի ի խորասան գայն տանէին...

Ծնորհայի կը վերադրուին մօտաւորապէս երեք հարիւր հանելուկներ, բոլորն ալ գրուած պարզ ժողովուրդէն հասկնալի լեզուով մը, որոնք կը կոչուին «Առակք վասն ուրախութեան մարդկան»:

«Ներսէս Ծնորհայի» բարձրարժէք հատորին վերջին գլուխը յատկացուած է մեծ եկեղեցականի արուեստին ուսումնասիրութեան և վերլուծումին: Ծնորհային տաղիւններէն է որ անվարան կը զիմէ ժողովրդական անդիր բանահիւստութեան՝ իր ստեղծագործութիւններուն ուղին ու ոճը անկէ վերցնելու նպատակով: Ու հոս իսկ է Ծնորհայի մեծ արժանիքը. որովհետեւ իր ժամանակի գրականութեան կը բերէ տաղաչափական նորութիւններ ու իր իսկ քերթուածներով կը մշակէ այդ ձեւերը: Իր գործածած չափերն են երկանդամ ութ (4+4) վանկանի («Յիսուս Որդի»), «Բան Հաւատոյ», «Ողբ Եղեսիոյ», ² և տանդամ տասներկու (4+4+³4) վանկանի («Յաղագս Երկնից և Զարդուց Նորայ», «Անեղ Որդի», «Մարտեցաւ Տէրն ի Սաշին»), միանդամ հայ հինգ³(3+2) վանկանի («Առաւօտ Լուսոյ», «Աշխարհ Ամենայն»), Գործածած է նաև խառն չափեր:

Ներսէս Ծնորհայի մեծապէս աղղուած է Գրիգոր Նարեկացիէն և Գրիգոր Մագիստրոսէն: Ազդեցութիւնը ամենէն աւելի ցայտուն է երբ Ծնորհայի հանդիսութեան արուեստը կը մշակէ: Այստեղ, լատաղոյն կերպով օգտագործած է բաղաձայններու կրկնութիւնը տողերու մէջ (վ, շ, ծ, ս): Ծնորհայի զանազան շափերու գործածութեան հետ իր բանաստեղծութիւնները զեղեցկացուցած է նաև բնութենէն և կեանքէն առնուած սքանչելի պատկերներով և փոխաբերութիւններով: Իր լեզուն, յաճախ գրարար ըլլալով հանդերձ, պարզ է ու հասկնալի: Հեղինակը կը գրէ. «Հիմք բնութենէն մի կողմից մեր պատմիչների, մատենագիրների և առանձնապէս Գրիգոր Նարեկացու հարուստ, ձկուն ու զեղեցիկ լեզուն, միւս կողմից՝ վարպետորէն օգտագործելով ժողովրդի կենդանի, խօսակցական և աշխարհիկ բանաստեղծութիւնների գունագեղ ոճերն ու նրբերանգները, նա կերտեց պարզ ու զեղեցիկ, կենսունակ գրական լեզու» (էջ 263):

Մեծ եղած է Ներսէս Ծնորհայի քերթողութեան ազդեցութիւնը հետագայ սերունդներու վրայ: Ներսէս Լամբրոնացի, Գրիգոր Սկեւոացի, Յակոբ Կլայեցի, Յովհաննէս Երզնկացի, Կիրակոս Երզնկացի և ուրիշներ շատ բան կը պարտին Ծնորհայի արուեստին:

Հայաստանեայց եկեղեցիի և Հայ ժողովուրդի փառքերէն մէկուն նուիրուած «Ներսէս Ծնորհայի» ուսումնասիրութիւնը պատիւ կը բերէ անոր բաղաձայնուած հեղինակին և հրատարակչներուն, միաժամանակ յիշեցնելով թէ մեր հին գրականութիւնն ու արուեստի այլ ճիւղերը տակաւին քանի՜ լուսաշող այլ մոռցուած գէմքեր ունին՝ պրպտողներու և արժեւորողներու սպասող:

Ա. Գ.



ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐ

Ս. ՏԻՄՈԹԵՈՍԻ ՎԱՆՔ Ի ԿԱՐԿԱՌ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ. — Ս. Տիմոթեոսի վանքը կը գտնուէր ԿարկառաՊարաքին մօտ, Եփրատ գետի ափին վրայ. — Կիւլէտէրեան, Պատմ. Կթղ. Կիլիկիոյ, էջ 295:

ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ. — Ս. Տիմոթեոսի վանքին պատմութեան մասին տեղեկութիւններ չեն հասած մեզի: Վանքին միակ ծանօթ շրջանն է ԺԶ. Դարու վերջը երբ Պետրոս Վրդ. Կարկառեցի հաստատուած էր հոն և հիմնած արդիւնաւոր դաստաւան մը:

Պետրոս Վրդ. Կարկառեցի ծնած է Կարկառ փոքր քաղաքին մէջ 1552 ին: Հայրը կը կոչուէր մահաւոր եւսայի: Իր սուսմբ ստացած է Ամթեցի Յովհաննէս Շիրակ վարդապետի մօտ (+ 1582): Իրբն գիտուն վարդապետ հռչակուած է 1586 ին: Իրբն եպիսկոպոս կը յիշուի 1590 ին: Գրիգոր Դարանաղցի դավանամբ կը գրէ իր մասին. «Այս Պետրոս կարի յոյժ առաքինի էր, և կարի հմուտ դուլով Հին և Նոր կառկարանաց, նրբից և արտաքնաց. և ժիր էր ի աշակերտաց վարժումն և ի դաս տեսնն. և շատ ժամանակ նստեալ կայր ի վանս Կարկառ» (Ժամանակագրութիւն, էջ 351):

Կարկառեցիի աշակերտներէն մէկը իրենց դասարանի կեանքէն յիշատակ մը արձանագրած է 1594 ին Կարկառ գրուած «Գիրք Սահմանաց և Բառարան»ին մէջ. «... յիշեցէք զսուսեցիչ զՏէր Պետրոս վարդապետն, որ ի վերջին դառն ժամանակիս իբր գնոր արուստակ տաւաւար երեւալ փայլմամբ յագգիւ Հայոց, որ դաւաւր տապեալ դասն աւերինակէտք ամէն աշակերտ իւրեան. զի աւերինակն մէկ էր, և աշակերտացն կարգաւոր չէր ժամաներ, զոր մեք Զ աշակերտք, և այլ աւելի, աւերինակէտք դաս ի վանքն Կարկառայ, ի դառն ժամանակիս, որ մէկ մարդայն Զ Ֆլորի խորած առնէին ...» (Թարս Աղբար, Բ., էջ 454):

Հալէպի Հայերը Կիլիկիոյ Ազարիա Զուգայեցի Կաթողիկոսին մահէն ետք

զինքը կը բարձրացնեն հայրապետական տիտ, 1601 ին, և եթ տարի կը մնայ Հալէպի մէջ իբրեւ Կաթողիկոս, մինչ Սիսի մէջ Կիլիկիոյ Աթոռին վրայ կը գտնուէր Յովհաննէս Դ. Անթէպցի:

Կարկառեցին կը վախճանի 1608 ին, Հալէպի մէջ, և կը թաղուի տեղւոյն Ս. Քառասնից Մանկանց Եկեղեցին: Ընդարձակ տապանադիրը յօրինած է իր աշակերտներէն Թումա Վրդ. Կարկառեցի:

Պետրոս Կարկառեցի սենցած է բաղմամբիւ աշակերտներ, որոնցմէ 10 հատին տուած է վարդապետական գաւազան (Պատմ. Կթղ. Կիլիկիոյ, էջ 297: Հմմտ. նաև էջ 271): Այդ աշակերտներն են, այբուբենի կարգով,

1. — Գառպար Վրդ. Զեմուցի. — Դար., ժամանակագրութիւն, էջ 363:

2. — Զաւարիա Վրդ. Վանցի, Գիւլիսի, պատրիարք Կ. Պոլսոյ (+ 1640). — Նախ աշակերտած է Բաղիշեցի Բարսեղ մեծ վարդապետին և ապա Պետրոսի մօտ գալով անկէ ստացած է վարդապետական ասործան (Դար., էջ 364):

3. — Թումա Վրդ. Կարկառեցի, վաղաժող: Յօրինած է իր սուսեցչին Պետրոսի ընդարձակ և արժէքաւոր տապանադիրը, 1608 ին. — Պատմ. Կթղ. Կիլ., էջ 298:

4. — Խաչատուր Վարդապետ. — Կարապետ Վրդ. Երզնկացի և Յովհաննէս Կարկառեցի գրիչ կը գովեն զինքը իբրեւ «քաջ երաժիշտ». — Պատմ. Կթղ. Կիլ., էջ 271 և 254:

5. — Կարապետ Վրդ. Երզնկացի կամ Թիւրաւանցի, Քոթ. — Եղած է աշակերտ Երզնկացի Ղազար վարդապետի բայց գաւազանի իշխանութիւնը ստացած է Պետրոսէն, Հալէպի մէջ (Դար., էջ 357): Ընդարձակ բայց անարուեստ ներբողեան մը գրած է «Ի թաղումն վարդապետին իւրոյ Տեառն Պետրոսի Կաթողիկոսի Կարկառեցւոյ, և Տեառն Գրիգորի Ուսահեցւոյ, որ առաջինն Սրբապետն էր անուն նորա, Կաթողիկոս էջմիածնի»: Թիւրաւանցին մի առ մի կը թուէ այն հեղինակները և գիրքերը որ կը սերտէին այդ շրջանին. — Պատմ. Կթղ. Կիլ., էջ 267-277: Սիւրմէեան, Պատմ. Հալէպի Հայոց, Դ. Հատոր, էջ 129-145:

6. — Կարապետ Վրդ. Թլկուրացի (+ 1607). — Կարկառեցիի երէց աշակերտը: Երկու տարի առաջնորդ նստած է երգչընկայի Տիրաշէն վանքը և թալանուած սրբութիւնները յաջողած է հոտ ստանալ: Ետքը գացած է Լեւոյց աշխարհը և հոն վախճանած. — Դար., էջ 352: Կիւլ., էջ 271:

7. — Ղազար Վրդ. Երզնկացի (+ 1600). — Նախ եօթ տարի կ'աշակերտի Սեբաստացի Աստուածատուր վարդապետին (+ 1587), ապա կը դիմէ «ի համբաւն Կարկառեցոյն Պետրոսին և եօթն տարի այլ դեպքերէնով ի դրսնս լսարանի նորա, և յետ եօթն ամաց ապա կեն յաշխարհն մեր, ի նսեմ և երկնայացեալ ժամու լոյս ծագաց խաւարեալ ողոյս: Եւ դարգարեալ էր տեսականն և գործնականն և երաժշտական երգաւք քաղցրածայնութեամբն»: Ան բաւական ճիգ կը թափէ ժամանակի անհաշիւ զեղծումները ուղղելու, բայց շատ յաջողութիւն չի գտներ, և վաղամահ կը վախճանի Երզնկայի մէջ և կը թաղուի Ս. Սարգիս Եկեղեցին. — Դար., էջ 352-6:

8. — Ղազար Վրդ. Տաւրուցի. — Դար., էջ 363:

9. — Մաղախ Վրդ. Թոխաբեցի (+ 1634). — Սիրած է ճգնաւորական կեանքը, ուստի «զիւր ժամանակն հալածական եկաց անհանգիստ կենօք, և թէ լինէր՝ երկու ամառ յաւելի կ'ամ պակաս յերուսաղէմ կենար, և այլ ուրեք բնաւ մէկ տարի չէր կենալ, ոչ յանապատի՝ ի մէջ սրբոց, և ոչ ի մէջ աշխարհի՝ հետ անսրբոց: Վասն իւր անհանգիստ բարուցն և ոչ մի աշակերտ ստացաւ, ոչ լաւ և ոչ վատ» (Դար., էջ 364): Ուխտի գացած է նաև Հոռոմ սուրբ առաքելոց զերեզմաններուն 1625 թուին (Դար., էջ 382): Ի վերջոյ կ'երթայ Վանայ կղզին և հոն կը վախճանի (Դար., էջ 291):

Իրմէ ունինք յիշատակարան մը, գրուած 1602ին, ուր կը յայտնէ թէ Մահմատ շառուշ, յարձակելով Եւգոպիոյ վրայ, շատ աւերներ գործած է, իր գիրքերէն ալ շատերը կրակի մօտնուած են և շատերը կողոպուտի. — Յուլի 2-ին. Ս. Յակոբեանց, Գ. Հատար, էջ 131:

10. — Մարտիրոս Վրդ. Շենգուեցի (+ 1632). — Կարկառեցիի նշանաւոր աշակերտներէն մին, որ իրմէ ստացած է նաև եպիսկոպոսական ձեռնդրութիւն (Յուլի 2-ին. Ս. Յակոբեանց, Բ., էջ 170): Երկար տարիներ վարած է Չնքուշի Սիրահայեց Ս. Աստուածածին վանքին առաջնորդութիւնը (1593-1632): Վկայուած է իբրև «այր փիլիսոփայ և քաջ քարտուղար, որոյ գոն ծրեալ մատանց նորին յոյով գրեանք ի սուրբ վանքս և յեկեղեցին ուր ի Շէնքուշ» (Թ. Աղար, Բ., էջ 458): Իր աշակերտներէն կը յիշուին երեք հոգի, Յովհաննէս Շէնքուշցի, Արիստակէս Խարբերդցի և Սիմէոն Դիտող (Նոյն, էջ 484): Իր ձեռքի արդիւնքներէն յիշուած է Լամբրոնացոյ Պատարագի Մեկնութիւնը, օրինակուած 1613 թուին (Նոյն, էջ 484-6):

11. — Մելիսեք Վարդապետ. — Յիշուած է Կարապետ Պրզնկացիի Ողբին մէջ իբրև «նորահասակ». — Պատմ. Կթղ. Կիւլ., էջ 271:

Վերագրեալներէն դատ ուրիշներ ալ կը յիշուին, որոնք թէև Պետրոսէն դաւազան չեն ճատացած, բայց ժամանակ մը մնացած են անսր մօտ իբրև աշակերտ: Ասանք են, չգարձեալ տրսուրնական կարգով:

1. — Գրիգոր Գանսակեցի (+ 1645). — Ծնած է Գանձակի Սպիտակաշէն գիւղը: Ժամանակ մը աշակերտած է Կարկառեցիին: Հետագային եղած է պատրիարք Երուսաղէմի և մակակոռուած Պարոնտէր (1610-1645). — Սիրն, 1958, էջ 188:

2. — Կիրակոս Երէց Տապիզդունցի (+ 1621). — Ըստ Դարանաղցիի «բազում ժամանակս կեցեալ ի լսարանս Կարկառեցի Պետրոսին և էր կատարեալ փիլիսոփայ», բայց չէ ուղած վարդապետ դառնալ՝ նախընտրելով հետեիլ ճգնաւորական կեանքի (ժամանակագրութիւն, էջ 392): Անապատական կեանքի իր բուռն փափաքը կ'իրականացնէ Կիրակոս՝ Սաղմոսավանքի Սարգիս եպիսկոպոսին հետ, Սիւնեաց աշխարհին մէջ հիմնելով Մեծ Անապատը, ուր պահ մը կ'ըլլայ նաև «գրոց ուսուցիչ» (Դաւրիթեցի, Պատմութիւն, 1896, էջ 259):

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

● Շր. 1 Օգոստ. — Ս. Երկոստանի առաքելոցն Քրիստոսի եւ Պօղոսի՝ երեւաւաներոց առաքելոցն: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Պօղոսի վերնամասերան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Տաթև Արղ. Ղարիպեան:

● Կիր. 2 Օգոստ. — Բարեկենդան Վարդավառի պահոց: Ս. Պատարագը՝ մատուցուեցաւ ի Ս. Զարուիթիւն, Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Արշակ Արղ. Խաչատուրեան:

● Ուր. 7 Օգոստ. — Նախատօնակը պաշտուեցաւ Մայր Տաճարին կից՝ Ս. Էջմիածին մատարան մէջ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Նորայր Եպս. Պողարեան:

● Շր. 8 Օգոստ. — Յիշատակ Տաղանակին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Էջմիածին մատարան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Կոմիտաս Արղ. Պատուէրեան:

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ Այլակերպութեան մեծահանդէս նախատօնակը: Հանդիսապետն էր Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ապա կատարուեցաւ Տեսաւեղբոր Դահլիճութեան նուիրուած հանդիսութիւն:

— Իրիկնադէմին, Մայր Տաճարին մէջ կատարուեցան «Եկեղեցւոյ եւ Հակման կարգեր: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Նորայր Եպս.:

3. — Յովնաննեա Կարկառեցի, Գրիշ, եղբորորդի Պետրոս Կաթողիկոսի. Օրինակած է մէկ Աս Որոս ճառք Գրիգոր Աստուածարանի (Զեռ. Ս. Բ. 794. Պատմ. Կթղ. Կիլիկիոյ, էջ 253-4): Յիշեալ ձեռագրին մէջ ունի հետեւեալ ռասնուոր յիշատակագրութիւնը (էջ 110-111).

«Սրտիւս ունիմ փափաք բանիս, զործիւ հմուտ չիմ արուեստիս, բայց աղաչեմ՝ որ հանդիպիս, սրտիւ տառյ՝ Տէր սղորմիս, զհաւերեղբաւր իմոյ Տեսուն Տէր Պետրոս Կաթողիկոսիս, որ կամարար է սա զործիս. տաւր աէր սորոս զկամս սրտիս, ւ առաջնորդեայ զինքն ի բարիս»:

4. — Յովսէփ Սոնոզուն, Գրիշ, որ, 1589 ին, Կարկառ քաղաքին մէջ կ'օրինակէ Անանիա Շիրակացիի մէկ զործը. — Պատմ. Կթղ. Կիլիկիոյ, էջ 252:

Ն. ԵՊՍ. ՆՈՎԱԿԱՆ

● Կիր. 9 Օգոստ. — ՎՈՐԳԱՎԱՌ (Տօն Այլակերպութեան Տեսնոց): Մայր Տաճարի Ապա Սեղանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուց լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս.: Ս. Պատարագի արարողութենէն մաս մը ձայնասփռուեցաւ Յորդանանի Հաշիմական ռատիօկայանէն:

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ Անդառտան: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Նորայր Եպս.:

● Բշ. 10 Օգոստ. — Յիշատակ մեռելոց: Մայր Տաճարի Ս. Գլխաղբի մատարան մէջ պատարագեց Հոգշ. Տ. Դանիէլ Արղ. Շամիեան: Ապա, Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Նաղարեանի նախագահութեամբ, կատարուեցան հոգեհանգստեան կարգեր, նախ եկեղեցւոյ մէջ, ապա գաւիթը՝ Երանշնորճ Տ. Կիրեղ Պարբ. շիրմին վրայ, եւ յետոյ Զամ-Թաղի գերեզմանավայրը:

● Ուր. 14 Օգոստ. — Նախատօնակին ի Ս. Զակար նախագահեց Գերշ. Տ. Նորայր Եպս.:

● Շր. 15 Օգոստ. — Ս. Թալէսի առաքելոցն մեռոյ եւ Սոնոզուն լուսին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Զակարեանց Մայր Տաճարի Ս. Գլխաղբի մատարան մէջ: Ժամարարն էր Արթ. Տ. Կարապետ Քհնյ. Անդրէասեան:

● Կիր. 16 Օգոստ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Զարուիթիւն, Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Յովսէփ Վրդ. Մամուր:

● Բշ. 17 Օգոստ. — Այսօր սկսաւ Ս. Աստուածածնայ վերափոխման տօնը կանխող ամենօրեայ հանդիսաւոր Ս. Պատարագներու մատուցումը Գեթսեմանի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ:

● Կիր. 23 Օգոստ. — Բարեկենդան Ս. Աստուածածնի պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Զակար՝ Ժամարարն էր Հոգշ. Տ. Տաթև Արղ. Ղարիպեան: Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ Թաղողօրհնէքի արարողութիւն, նախագահութեամբ Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպսի:

● Ուր. 28 Օգոստ. — Նախատօնակը պաշտուեցաւ Մայր Տաճարին կից՝ Ս. Էջմիածին մատարան մէջ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Նորայր Եպս. Պողարեան:

● Շր. 29 Օգոստ. — Տօն Եղեղեղի Ս. Էջմիածնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Էջմիածին մատարան մէջ: Ժամարարն էր Արթ. Տ. Կարապետ Քհնյ. Անդրէասեան:

— Կէսօրէ ետք, Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժերով մեկնեցան Գեթսեմանի ձորը ու «Հրաշափառութիւն» ժուռք գործէցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու վերափոխման մեծահանդէս նախատօնակը: — Գիրչերակիրքին, նոյն եկեղեցւոյ մէջ կատարուեցան նաեւ եկեղեցի եւ Հակման կարգեր: Հանդիսապետն էր Հոգշ. Տ. Յովսէփ Վրդ. Մամուր:

● Կիր. 30 Օգոստ. — ՎԵՐԱԲՈՒՈՒՄՆ Ս. ԱՍՏԻՈՒՆՆԵՐԻ: Առաւօտեան ժամը 8ին, Լուսարարացեալ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. գլխաւորութեամբ, Միաբան Հայեր ինքնաշարժերով մեկնեցան Գեթսեմանի ձորը ու «Հրաշափառ» մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Գերշ. Սրբազանը մատոյց օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ և ապա նախագահեց «Անդատան»ին:

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ պաշտօնեցան «Անդատան», երեկոյեան ժամերգութիւն և նախատօնակ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Նորայր Եպս.:

● Բշ. 31 Օգոստ. — Յիւստակ մեռելոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Արիս Արղ. Շիրվանեան: Ապա, Լուսարարացեալ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. նախագահութեամբ կատարուեցան հոգեհանգստեան կարգեր, նախ եկեղեցւոյ մէջ, ապա գաւիթը՝ Երանշնորհ Տ. Կիւրեղ Պատրիարքի շիրմին վրայ և յետոյ Չամ-Թաղի գերեզմանատան մէջ:

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ք

● Եշ. 6 Օգոստ. — Հարամ Շէրիֆի նորոգութեան աւարտումին առթիւ, Ն. Վեհ. Հիւսէյն Թագաւորի կողմէ կատարուած բացումի արարողութեան Պատրիարքարանին կողմէ ներկայ

գտնուեցան Աւագ Թարգման Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Նազարեան և Քարտուղար Տիար Կար. պիս Հինգիւսի:

— Նոյն առիթով, ինթրքօնթինէնթալան. դոկի մէջ տրուած ճաշկերոյթին ներկայ եղաւ Հոգշ. Տ. Գէորգ Վարդապետ:

● Գշ. 11 Օգոստ. — Ն. Վեհ. Հիւսէյն Թագաւորի Գահակալութեան 12րդ տարեդարձին առթիւ, Լուսարարացեալ և Պատր. Փոխանորդ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. շնորհաւորական և բարեմաղթական հեռագիր մը յղեց Ամմանի Արքեպիսք:

● Եշ. 13 Օգոստ. — Եղիպտոսէն հիւրարար Քաղաքս գտնուող Ղպտի Եպիսկոպոս Գերշ. Տ. Անպա Լուգաս այցելեց Պատրիարքարան և ընդունուեցաւ Լուսարարացեալ և Պատր. Փոխանորդ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. կողմէ:

● Կիր. 16 Օգոստ. — Կէսօրէ առաջ, Ս. Ուխտիս երիտասարդ Միաբաններէն Հոգշ. Տ. Կամիտաս Արղ. Պատուէրեան մեկնեցաւ Միացեալ Նահանգներ, ուր պիտի հետեի երամշտագիտական ուսմանը և միաժամանակ պիտի հովուէ Իսթ Սէյնթ Լուիզի (Իլինոյզ) նորակազմ Հայ համայնքը:

● Գշ. 25 Օգոստ. — Պէյրութէն Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Կարպիսեան հիւրարար ժամանեց Ս. Աթոռ և վերադարձաւ շարքի մը ետք:

● Ուր. 28 Օգոստ. — Ս. Ուխտիս երիտասարդ Միաբաններէն Հոգշ. Տ. Արիս Արղ. Շիրվանեան, որ չորս տարիներէ ի վեր կ'ուսանէր Անգլիոյ մէջ, ժամանեց Ս. Աթոռ և վերադարձաւ տասը օրեր ետք:

«ՍԻՈՆ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿԻՒՂՔԵՆԿԵԱՆ ՄՍՏԵՆԱԿԱՐԱՆԸ ՇՆՈՐՀԱԿԱՂՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՅԱԾ ԵՆ ՀԵՏԵՒԵԱՂ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ստանալին Ոսկեայ Մագեր - Կրթմ:

Ճամբուղկներ - Անտերսըն:

Փոքրիկ Մովսէս - Անտերսըն:

Երեք զրքերն ալ հրատ. և նուէր են Ա. Բ. Գ. Մանկապատանեկան Մատենաշարի (Թիւ 1, 2, 3): Իսթանպուլ, 1964:

Լեզուաբանութիւն - Համազգային Գրական Լեզուի մը կերտումին ի կնդիր - Յակոբ Թորոսեան: Տպարան և նուէր «Զարթօնք»ի, Պէյրութ, 1964, էջ 67:

أصدرها - بطريق كبة الارمن الارثوذكس المدير والمحرر المسؤول - صاحب النافذة رئيس الاساقفة هايكازون أبراهاميان
تطبع في مطبعة دير الارمن - القدس
سبتمبر ١٩٦٤ العدد ٩

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem, Armenian Patriarchate, Jerusalem.
Editor - Archbishop Haigazoun Abrahamian, Armenian Convent, Jerusalem.
Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.

վասոյի Հեֆեաթը (Թատերախաղ 6 տեսարանով) — ժողով Շեհնաւէ: Թարգմանեց Արմէն Դարեան (նուիրատու): Հրատ. Հ. Ե. Ը. ի վահրամ — Փափազեան Թատերախումբի թիւ 1: Պէյրուսթ, 1964, էջ 122:

Հօր վրեժը (Պատմութեան Պատանիներ շարք) — Պետրոս Քաջերեանի (նւրաւ.): Թէհրան, 1964, էջ 64:

Նոյնէն օրինակ մըն ալ կը նուիրէ Մ. Ղարաբէկեան (Թէհրան):

Արիւնոս Թազը (Դրամա Հինգ Արար, վեց Տեսարան) — Գէորգ Դարձի: Նուէր ըստ նախորդին: Թէհրան, 1964, էջ 106:

Իրանի Զինամակ Գաւառը — Աւ. Քահ. Եղգարեան: Նուէր ըստ նախորդին: Թէհրան, 1963, էջ 192:

Փրացոյց 1964ի — Կազմեց Աւ. Քահ. Եղգարեան: Նոր-Ջուղա, Սպահան: Տպարան Ս. Ամենափրկչեան վանուց: [էջ 39:

Մրբունի Ռիթա Քաւիայի — Հայացոյց Հ. Աւետիք վրդ. Թալաթիեան: Գահիրէ, 1964, Բարձրան Գիւղ (Համայնապատում 1600-1937) — Աշխատասիրեց Մանուկ Պ. Միքոն: Նուէր Լիւն Մ. Միքոնէ: Պոսթըն, 1938, էջ 280:

Պատակարգային Կալենեու Դիմը Ազգերու Պատմութեան Մէջ — Լիւն Մարտիրոսեան (նուիրատու): Պէյրուսթ, 1963, էջ 883:

Անունը Մասիս Դրիմֆ (Պատմութեան շարք) — Աւ. Ալիքսանեան (նւրաւ.): Փարիզ, 1964, Տոնացոյց 1964ի: Վիեննա, Միթթարեան Տպարան: [էջ 151:

Տեղեկատուութիւն Սիմոնեան Հաստատութեան 1963-1964: Նուէր Անուշաւան Սիմոնեանէ: (Հայերէն և Անգլերէն): Պէյրուսթ:

Ախորժեի Խօսքեր ժող. ժ. 10 — Պ. Պ. Աճէմեան (նւրաւ.): Պէյրուսթ, 1964, էջ 23:

Օտարաւեցի մը Գնդակը (Թատերադուր թիւ 3 Արարով, էնտոնիզիոյ Կեանքէն): Տաքթ. Վարդան Աղեքսանդրեան (նուիրատու): Ֆրանսերէնէ թարգմանեց Երուանդ Գարսեան: Պէյրուսթ, 1963, էջ 37:

Շուեանիկ եւ Երեմ Արշերը (Պատմութիւն Մանուկներու և Պատանիներու Համար) — Հեղինակ և նուիրատու ըստ նախորդին: Պէյրուսթ, 1963, էջ 16:

Յովնանեա Արք. Նազիւանի Ընտերը (Ա. Հատոր) — Թարգմանեց Դոկա. Հմայեակ Ստեփանեան: Նուէր Հ. Բ. Ը. Մ. էն, Նիւ Եորք: Պէյրուսթ, Հայ Կաթողիկէ Տպարան, 1960, էջ 690:

Էջմիածին Ալբոմ (Հայերէն և Անգլերէն) — Խմբագիր Ա. Հատիտեան: 1962: Նուէր Գէորգ վրդ. Կարպիսեանէ: [1957, էջ 9:

Սուրբ Պատարագի Գպարց Բաժին եւ Շարականքեր — Նուէր «Նոր Կեանք»էն: Պէյրուսթ, Անգլիկ ժողով — Վեր. Ա. Զ. Եղոյեան: Ի Յուշ Իր Օրհնեալ Կեանքին: 1867-1937: Նուէր Լիւն Սիմոնեանէ: Պէյրուսթ, Ամերիկեան Տպարան, 1964, էջ 312:

Իրանահայ Արդի Գրողներ (Ա. Գիրք) — Ինքնուրոյն Ստեղծագործութիւններ: Հրատարակութիւն Իրանահայ Գրողների Միութեան: Թէհրան, 1964, էջ 516:

Նոր Գեղի — Ազգադրական Հանդէս: Ա. Մաս — Հին Գղի: Պէյրուսթ, 1964, էջ 167:

Տարեգիրք 1963-1964 Ուսումնական Տարուայ — Ազգային Միացեալ Վարժարանի, Պաշտատ (Խմբարար):

Աւանային (Օրուս Գ. թիւ 3) — Յակոբ Ս. Մանուկեան (նուիրատու): Խօսք Վ. Մովսեանի: Խաւիթա, Տպ. Վենետիկ, 1964, էջ 4:

Ա. Օ. Ք. Ս. էն ստացուած են հետեւեալները. —

ա) Առանց Հայրենիքի (Վիպակ) — Ստեփան Ալաճաճեան: Երևան, 1963, էջ 218:

բ) Կարօս եւ Կեանք — Արմէն Դարեան: Երևան, 1963, էջ 203:

գ) Շիրակ (Երկրորդ Գիրք) — Աղաւնի: Երևան, 1964, էջ 580:

դ) Երկերի ժողովածու (6րդ Հատոր) — Նայիրի Զարեան: Երևան, 1964, էջ 634:

ե) » » (5րդ Հատոր) — Բաքի: Երևան, 1963, էջ 529:

զ) » » (6րդ Հատոր) — Բաքի: Երևան, 1963, էջ 558:

է) Ընթերցանք (Հատոր Ա.) — Վիլհելմ Շէյքսպիր: Երևան, 1964, էջ 905:

ը) Լեռներ Հայրենի — Վախթանգ Անանեան: Երևան, 1963, էջ 706:

- թ) Երկերի ժողովածու (Հատոր Զորորդ) - Պերճ Պոստեան: Երևան, 1963, էջ 533:
- ժ) Պատուիրեցին Յաննեկ Զեզ - Մկրտիչ Արմէն: Երևան, 1964, էջ 445:
- ժա) Ծիծեռնակները Յաննեկ Անցան - Գեղամ Սեան: Երևան, 1964, էջ 407:
- ժբ) Անահիտ Դիցունու - Պատեմունցը - Կ. Վ. Մելիք-Փաշայեան: Երևան, 1963, էջ 341: [էջ 162:
- ժդ) Մեսրոպ Մատոց - Յոգուածներ ժողովածու: Երևան, 1963, էջ 341: [էջ 162:
- ժդ) Երկեր (Հատոր Ա.) - Ակսել Բակունց: Երևան, 1964, էջ 744:
- ժե) Հայ ժողովրդական Հեփաքներ - Դ.: Երևան, Հայկ. ՍՍՌ ԳԱ Հրատարակչութիւն, 1963, էջ 550:
- ժզ) Երկերի ժողովածու (Հատոր Երկրորդ) - Յակոբ Պարոնեան: Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչութիւն, 1964, էջ 407:
- ժէ) Նայնին Գ. Հատորը: Երևան, 1964, էջ 422:
- ժը) Շնիկով Տիկիկը - Ա. Զեխով: Երևան, 1964, էջ 150: [1963, էջ 4:
- ժթ) Սայաթ Նովա - Երաժշտութ. Արտ. Խաչատրեանի: Խօսք Ա. Գրաշու: Երևան, Ինտենսիվային Պիեսների ժողովածու (Սկսնակ Մեծահասակների Համար) - Կազմող Ս. Հ. Ղամբարեան: Խմբագրութեամբ Գ. Վ. Սարաճեանի: Երևան, 1964, էջ 96:
- Մեկնաբանութիւն «Սանասար եւ Բաղդասար» Դիւցազներգութեան ի Լոյս Սուսերա-Հայ Բարբառի - Դր. Գ. Կիւլպէնկեան (Ֆրանսա): Առանձնատիպ «Պատմա-Բանասիրական Հանդէս» ի 1964 ի Ա. թիւէն: Հայկական ՍՍՌ ԳԱ, Երևան, էջ 73-90:
- ANNUAL REPORT - American Friends of the Middle East, Inc. 1962-63.
- APRIL 24, Armenian Memorial Day. Issued by ACIA.
- A SHORT HISTORY OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF HOLY VIRGIN MARY (Saidabad, West Bengal). Calcutta, Swallow Press, pp. 24.
- AN AFRICAN STUDENT IN CHINA - Emmanuel John Hevi. New York, Frederick A. Praeger, 1962, pp. 220. Presented by George A. S. Goddard Fund.
- FROM COLONIALISM TO COMMUNISM - A Case History of North Vietnam. Hoang Van Chi. New York, Frederick A. Praeger, 1964, pp. 252. Presented as above.
- ARMENIAN FOLK FESTIVAL - New York World's Fair. May 31st, 1964. Presented by the Armenian Folk Festival Committee, New York.
- A SURVEY OF PUBLICATIONS ON ARMENIAN NUMISMATICS FROM 1925-1963 - Paul Z. Bedoukian (presented by the author). (Extrait de la « Revue Des Etudes Arméniennes », Nouvelle Série, Tome I. Paris, 1964.
- BIBLIOGRAPHIE DES LIVRES DU XVIIIè SIECLE - Georgeaje Mihailoviç (In Serbian). Belgrade, 1964, pp. 383.

ՄԱՄՈՒԼԻ ՏԵԿ՝

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԶԱՏԿԻ

ԼՈՅՍԻ ԵՒ ՍԻՐՈՅ ԿԱՆԶՈՎ

(ՈՐԲԻ ՄԸ ՕՐԵՐԵՆ)

ՎԻՊԱԿ